2849

Ա. Սիրեցյան
Հաշվապահություն
1911թ.

891.99
Ա-13

Հ.Ս.Գ.

XVI

19 NOV 2010
2005
891.99 ար
Ա-13 2849
800
13-ԱԲ

ԱԼԻՔՍԱՆԴՐ ԲՐԻԼԵԱՆ

# ՆՇԱՆՈՒԱԾՆԵՐ

ԳԻՐՔ 3 ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

1001/44

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A. Публичная Библиотека
7/XI-1922
именна Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ «ԷՊՕԽԱՆ», ՄՈՒՍԼԻՑՍԿԻ ՊԵՐ. № 8.
1911

-.01. 2013
16.670

## ԴՈՐԾՈՂ ԱՆՁԻՐԵՐ

1. Ցարուբիւն.—*Ծերունի կօշկակար։*
2. Մարիամ.—*Սրա կինը։*
3. Օվանէս.—*Որդին, գործակատար, 27 տարեկան։*
4. Դասպար.—*Զինագործ, սրա ընկերը, 26—27 տ., կարմիր շապկով։*
5. Սահակ.—*Փայտի պահեստի պահապան, ծերուկ։*
6. Դայիանէ.—*Սրա կինը։*
7. Շուշանիկ.—*Սրանց աղջիկը և Օվանէսի նշանածը։*
8. Դրիգոր.—*Մի թուղթ խաղացող, ֆրանտ հագնող տղայ։*
9. Մարգար.—*Բանուոր կօշկակար։*
10. Արմենակ.—*Նոյն (պատանի)։*
11. Արամ.—*Փականագործ, Օվանէսի հօրեղբօր որդին։*

*Թուղթ խաղացողներ, կօշկակարների աշակերտներ։*
*Բոլորը հագնում են եւրոպական հագուստ։*

---

## ՆՈՒԻՐՈՒՄ Է

## ԻՐ ԵՂԲԱՅՐ

**Դերասան Օվ. ԱԲԻԼԵԱՆԻՆ**

**Հեղինակը**

Настоящая пьеса, подъ заглавіемъ „Обрученные“, соч. Ал. Абеляна, разрѣшена Намѣстникомъ Его Императорскаго Величества на Кавказѣ, для представленія на сценахъ края (Отзывъ Канцеляріи за № 20316, 1907 г.

13 марта 1910 г.
г. Тифлисъ.

# ՆՇԱՆՈՒԱԾՆԵՐ

## ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ

*Բեմը ներկայացնում է միջակ մեծութեան մի աղքատ սենեակ։ Ձախ պատի պատուհանի առաջ մի սեղան, հասարակ սփռոց վրան, սեղանի վրայ լամպ՝ հասարակ թղթի լուսամփոփով. կողքերին մի-մի մոմակալ՝ մոմերով։ Պատուհանի կողքերով պատի վրայ կախուած է մի ձեռագործ հողաթափ, թըղթեր դնելու պայուսակ, մի կանացի ձեռքի քսակ։ Սեղանի շուրջը և առհասարակ սենեակում աթոռներ։ Սենեակի աջ անկիւնը յարմարեցուած է խոհանոցի համար. կողքի վրայ դցած մի արկղ, վրան կերօսինի հնոց, ամաններ և այլն։ Մէջտեղի պատի վրայ դուռ, որը տանում է ննջարան, կամ նոյն է խաղասենեակ։ Այդ դուռը բացուելիս՝ երևում է թղթախաղի սեղան, շուրջը աթոռներով։*

### ՏԵՍԻԼ 1.

**Սահակ եւ Գայիանէ**

ՍԱՀԱԿ.—Աղջիկ նշանել և յետ կտրելը հանաք էք կարծում։ Ի՞նչ վատ բան գտաք Օվանէսի մէջ։

ԳԱՅԻԱՆԷ.—Ի՞նչ անեմ, եթէ երեխայի սիրտը կտրուել է նրանից։

ՍԱՀԱԿ.—Կարելի է՝ դուք նրա երեսի դեղնութեանն էք մտիկ տալիս. բայց նա ջլոտ է և երկաթի առողջութիւն ունի։ Բացի այդ՝ նա գլուխը քաշ աշխատաւորի մինն է. և եթէ Շու-

չանիկը երեխայ է, չի հասկանում, գոնէ դու ինքդ մտածիր, թէ ինչ կասեն ուրիշները։

ԳԱՅԻԱՆԷ.—Ուրիշները ինձ հաց հօ չեն տալիս, պահում, որ ես ամաչեմ։ Փառք Աստուծոյ, հիմա ոչ թէ նշանուածների, այլ երեխատէր ամուսինների բաժանուելն էլ ոչ ոքի չի զարմացնում։

ՍԱՀԱԿ.—Խելքդ գլխի՞դ է արդեօք։ Զլինի չիմանամ նրա մօտ էլ այդպէս բաներ խօսես, թէ չէ՝ Աստուած է իմանում, թէ առանց էն էլ ինչ մոլորութիւններով ենք շրջապատուած։

ԳԱՅԻԱՆԷ.—Բերանիցս թուղթ հօ չեմ տուել նրանց։

ՍԱՀԱԿ.—Իսկ մեր խօսքը։ Գուցէ քեզ համար մի դատարկ բան է թքածը յետ լիզել։

ԳԱՅԻԱՆԷ.—Ես հօ չեմ կարող մի դատարկ խօսքի համար երեխայիս անբախտութեան պատճառ դառնալ։

ՍԱՀԱԿ.—(Խորհրդաւոր)։ Մի ստիպի ինձ հին դարմանը քամու տալ։ Փառք տուր Աստուծուն, որ նրանց ականջը ոչինչ չի ընկել, թէ չէ՝ կոշկակար Յարութիւնի որդին չէ, որ վերջին շաղատանը քո աղջկայ անունը չէր տայ։

ԳԱՅԻԱՆԷ.—Շատ հարկաւոր էր. դեռ թող գնայ իրա քաղցած չմնալու հոգսը քաշի, որ գործազուրկ անող իրա բանուորների ձեռքին գլուխն է կորցրել։

ՍԱՀԱԿ.—Սանձ դիր լեզուիդ, սանձ դիր լեզուիդ, և եթէ կորեկի չափ էլ է խելք ունես, այնպէս արա, որ աշխարհի խայտառակութեան առարկայ չդառնանք։

## ՏԵՍԻԼ 2.

### Սահակ, Գայիանէ եւ Շուշանիկ

ՇՈՒՇԱՆ.—(Մտնում է աջ դռնից, անճաշակ հագուած, մի ձեռքին վառ կարմիր գոյնի արեւակալ, կանաչ կապոց, դեղին կօֆտ, կապոյտ գլխարկ, կանաչ ձեռնոցներ)։ Ուֆ, էլի ով գիտէ ինչ տխրութիւն են բերել այս տունս։

ՍԱՀԱԿ.—Ինչի՞ց իմացար։

ՇՈՒՇԱՆ.—Մի՞թէ դէմքդ չեմ տեսնում։ Ի՞նչ ես ուզում մայրիկից։

ԳԱՅԻԱՆԷ.—Օ՜ֆ։

ՇՈՒՇԱՆ.—Ամենայն օր խեղճին չարչարելով չկշտացա՞ր։

ՍԱՀԱԿ.—Ինչո՞ւ ես սուտ խօսում։



ՇՈՒՇԱՆ.—Հը՛մ... Տէր Աստուած.. վեր էինք կենալու սուտ խօսենք։

ՍԱՀԱԿ.—Նախ և առաջ հարցրու, թէ ինչի՞ մասին էինք խօսում։

ՇՈՒՇԱՆ.—Ի՞նչ հարցնեմ... Սուտ է, որ խեղճ մայրիկիս երիտասարդ օրերը խաւարեցրել ես։

ՍԱՀԱԿ.—Ուրեմն ասելդ այն է, որ ես սուս անեմ։

ՇՈՒՇԱՆ.—Այ քեզ բան... հը՛մ, քեզ ո՞վ ասաց, որ սուս անես, հը՛մ։

ՍԱՀԱԿ.—Ապա ի՞նչ է, որդի։ Մի՞թէ նրա համար, որ հայրը անաջողութիւնների մէջ է մաշելիր կեանքը, պէտք է որդուց յանդիմանութիւններ լսի։ Չէ՞ որ շաբաթի լուր օրերը փայտի պահեստում մի փոքրիկ, ծխոտ տնակում՝ քեզ համար եմ ոսկորս փտեցնում։ Աւա, սիրելիս, ինչո՞ւ համար ես այդպէս փոխուել։ Մի՞թէ քեզ համար այլևս մի օտար եմ, Շուշան. մի՞թէ առաջուայ պէս դու էլ իմ աղջիկը չես, սիրելիս։

ՇՈՒՇԱՆ.—Էհ, խօսիր մի օգտաւէտ բանի մասին։

ՍԱՀԱԿ.—Ի՞նչ օգտաւէտ բանի մասին է խօսքդ։ (Դնդղում է նրա շորերը)։

ՇՈՒՇԱՆ.—Այս ի՞նչ է մեր կեանքը։ Փողոց եմ դուրս գալիս՝ հաղարաւոր աղջիկների, գոյն-գոյն շորեր հագած, կառքերով մարդ գալն եմ տեսնում, քիչ է մնում՝ սիրտս տրաքուի. տուն եմ գալիս՝ աղքատութիւն, քաղցածութիւն։ Իսկ դու անվերջ խրատներ ես կարդում գլուխներիս. և դեռ այս բաւական չէ, շորերիս էլ ես չարացած աչքերով նայում։

ՍԱՀԱԿ.—Երևի ինքդ էլ ես նկատում, որ մեզպէսներին այդ չի սազում։

ՇՈՒՇԱՆ.—Ա՜խ, տէր Աստուած, ինչո՞ւ ուրիշներին կը սազի, մեզ ոչ... հը՛մ... դէ էլ ինչո՞ւ ենք կանդնել, հանենք ու այնպէս մարդ գանք, էլի։

ՍԱՀԱԿ.—(Ապշած)։ Ես այդպէս չեմ ասում, Շուշան. մէկ մտածիր, թէ ինչ ես խօսում։

ԳԱՅԻԱՆԷ.—Ի՞նչ ես երեխայիս երեսը թափում։

ՍԱՀԱԿ.—Դու լռիր։

ԳԱՅԻԱՆԷ.—Իսկի էլ չեմ լռի. ինչո՞վ է նա պակաս ուրիշներից. բերանի համը չէ՞ հասկանում թէ՞, հեռու իրանից, աչքերն է կոյր։

ՍԱՀԱԿ.—Բայց դու նրան սովորեցրու մի լաւ բան։ Չէ՞ որ վաղը միւս օրը նա պէտք է պսակուի և հեռանայ հայրա-

կան տնից։ Դու նրան հասկացրու, որ նա այնտեղ պարտաւոր է աշխատել մեր երեսը պարզ անել։ (Զուլանին) Ի՞նչ ես ուսերդ շարժում։

ՇՈՒՇԱՆ.—Ա՜խ, տէր Աստուած, ախր ինչի՞ է հարկաւոր այս աւելորդ խօսակցութիւնը։

ՍԱՀԱԿ.—Ուրեմն այդ ճշմարիտ է, Շուշան։ Ապա ինչու էիր սկզբում քեզ ուրախ, բախտաւոր ցոյց տալիս, ինչու էիր մեզ խաբում։

ՇՈՒՇԱՆ.—Ի՞նչ անէի, որ վախենում էի։

ՍԱՀԱԿ.—Իսկ հիմա էլ չե՞ս վախենում։

ՇՈՒՇԱՆ. Ո՛ւֆ, ինչու՞ չես խօսում, մայրիկ։

ԳԱՅԻԱՆԷ.—Նրա հետ ի՞նչ խօսեմ. նա պահանջում է, որ դու քեզ զոհես նրա մի խօսքի համար։

ՍԱՀԱԿ.—Քի՞չ աղջիկներ կան, որ այդպէս են անում և յետոյ բախտաւորուելով՝ օրհնում են իրանց ծնողի յիշատակը։ Դու, իմ սիրելիս, դու նրա խելքով մի՞ շարժուիր, ոտքի տակ մի՞ գցիր իմ խօսքը։

ՇՈՒՇԱՆ.—Վնաս չունի... ես ինձ կը խեղդեմ, թող նա գայ և պսակուի իմ դիակի հետ։

ՍԱՀԱԿ.—Ոչ, ոչ, Աստուած մի՞ արասցէ, որդի։

ՇՈՒՇԱՆ.—Տեսնում եմ, որ էլ ուրիշ բան չի մնացել ինձ համար։

ՍԱՀԱԿ.—Մի՞ բարկանայ, սիրելիս, ես այլ ես չեմ երկրացնի։ Տեսնում եմ՝ դու այդ փոքրիկ տեղովդ ինձնից լաւ ես հասկանում աշխարհի չարն ու բարին։

ԳԱՅԻԱՆԷ.—Դէ հերիք է, էլի։ Ձեռք չե՞ս վերցնելու երեխայիս օձիքից։

ՍԱՀԱԿ.—Ճշմարիտ ես ասում։ (Շուշանին) Գնա, կապիր, բեր՝ իմ փոխնորդս։

ՇՈՒՇԱՆ.—(Գնում է ննջարան)։

## ՏԵՍԻԼ 3.

### Սահակ եւ Գայիանէ.

ՍԱՀԱԿ.—Ինչու՞ էի շատ սիրելուց քեզ այդքան երես տալիս, որ այսօրուայ օրը համարձակուէիր երեսիս կանգնել և խօսքս գետին քցել։

ԳԱՅԻԱՆԷ.—Ինձ չէիր հաւատում, դէ գնա՛, Փառք Աստուծոյ, հօ քո աչքով տեսար։



ՍԱՀԱԿ.—Այո, ես իմ աչքով տեսայ քո այդ նոր արարմունքդ էլ, և ինչ խօսք, որ հիացայ։

ԳԱՅԻԱՆԷ.—Ես ի՞նչ մեղք ունեմ, տէր Աստուած, մարդ հօ չե՞մ սպանել։

ՍԱՀԱԿ.—Եթէ Աստուած ինձ ստեղծած լինէր մի արիւնարբու, մի գազան մարդ, ես քեզ վաղուց ցոյց տուած կը լինէի, թէ ի՞նչ էր քո վարձը։

ԳԱՅԻԱՆԷ.—Ինչու՞, ինչ եմ արել։

ՍԱՀԱԿ.—Ի՞նչ ես արել... Քսան տարով աւելի ծերացրել, ցնցոտի ես շինել ինձ։ Քո պատճառով փողոցում ամօթից գլուխս չեմ կարողանում բարձրացնել, ահա այսպէս եմ մանգալիս (գլուխը խոնարհեցնում է)։ Թող լեզուս, կուլ տամ, թող քո ինձ պատճառած ցաւը տանելով տանջուեմ, ինչպէս այսքան տարի տանջուել եմ։

ԳԱՅԻԱՆԷ.—Իսկի էլ դու չես տանջուել։ Եթէ մեզանից մէկը տանջուել է, այդ եղել եմ ես։

ՍԱՀԱԿ.—Սուտ ես ասում, դու ամէն բան միայն ոտքի տակ ես գցել։ Ցիշիր, քանի անգամ է պատահել, որ ամիսներով հետդ չեմ խօսել, քանի անգամ է պատահել, որ կամեցել եմ կախուել, խեղդուել, գլուխս վերցնել և փախչել քո երեսից։

ԳԱՅԻԱՆԷ.—Փախչէիր, էլի՛, ճանապարհդ հօ չէի՞նք կտրել, ինչու՞ էիր մնում։

ՍԱՀԱԿ.—Որովհետև կարծում էի, թէ մի օր կը փոշմանես և Աստուծոյ ճանապարհին կը գաս։ Իսկ դու, անմիտ, կարծում էիր՝ եթէ ես քրիստոնէին վայել համբերութիւնով և գլուխս քաշ քցած լռում եմ և տանում, ուրեմն քեզ հետ մեղսակից եմ կամ ցած արարմունքի տէր մի անլեզու անասուն։ Բայց չէիր մտածում, որ եթէ ես այդ տանում եմ, տանում եմ նրա համար, նրա սիրոյ, նրա բախտաւորութեան համար։ Իսկ դու այդ բոլորի փոխարէն ինչպէ՞ս ես ինձ վարձատրել։ Ուր է՞ նրա առաջուայ փաղաքշանքը։ Նա առաջ իմ այս սևացած ձեռքերից, այս աղտոտուած, ծխոտուած շորերից չէր խորշում։ Նա առաջ ինձ սիրով «հայրիկ» էր կոչում և գիրկս վազում։ Ո՞ւր կորան նրա որդիական սէրը, նրա քաղցր նայուածքը։ Ինչու՞ այդ ամենը ես՝ այլ ես չեմ տեսնում։

ԳԱՅԻԱՆԷ.—Ի՞նչ է, ոսկու և քարեղէնների մէջ ես պահել նրան, շքեղ հագուստներով ես դուրս բերել մարդկանց առաջ, աղախիններով ես շրջապատել նրան։ Ի՞նչ ես արել նրան բախտաւոր անելու համար։ Աչքենք բացել, բացի ցամաքահացից ի՞նչ ենք տեսել։ Սրա-նրա բախտաւորութիւնը տեսնելով՝

նախանձից ճաքուել ենք, տրաքուել։ Սրանից աւել ինչ ես տուել մեզ։

ՍԱՀԱԿ.—Օ՜խ... Կարիր ձայնդ, թէ չէ մի օր կը ճաքեցնես դու իմ սիրտը։ (Բռնում է սիրտը եւ նստում)։

### ՏԵՍԻԼ 4.

**Սահակ, Դայիանէ եւ Շուշանիկ**

ՇՈՒՇԱՆ.—(Եկաւ ննջարանից մի կապոց ձեռքին)։ Բայց դու ի զուր ես նեղանում մեզնից։

ՍԱՀԱԿ.—(Դառնութեամբ)։ Ես ձեզնից նեղանամ։ Աստուած մի արասցէ։ Ընդհակառակը՝ ես այնքան եմ ուրախ, որ թեւ չունեմ թռչելու համար։ Այո, այո, մի մտիկ տայ ինձ զարմացած աչքերով։ Մի յիմար ծերուկ եմ ես, ցնդուած. ինձ ինչ կը պատկանի գերեզմանի խորքից վեր կենալ և ձեր գլխին խելք ու խրատ կարդալ։ Արէք՝ ինչ որ սրտներդ է ուզում. և ով որ ձեզ հակառակը սովորեցնի, այնպիսի երեսի մէջտեղին թքեցէք։ Է՜հ, չուշանանք մեր գործին։ (Առաւ կապոցը եւ այլն, գնաց աջ դռնով)։

ՇՈՒՇԱՆ.—(Նրա ետեւից նայելով)։ Ա՜խ, խիղճս ինձ տանջում է... Ինչու այդպէս արինք։

ԳԱՅԻԱՆԷ.—Հը՛, հիմա էլ դու ինձ մեղադրիր։

ՇՈՒՇԱՆ.—Չէ, ես քեզ չեմ մեղադրում... Բայց չէ՞ որ նրա երեսը միմիայն կիրակի օրերն ենք տեսնում։

ԳԱՅԻԱՆԷ.—Ինչու եմ քո պատճառով այսքան թուք ու մուր ուտում, որ այդպէս խօսես։

ՇՈՒՇԱՆ.—Դէ լաւ, մի տաքանայ, մայրիկ։

ԳԱՅԻԱՆԷ.—Ապա ինչ անեմ, որդի։ Մթթէ այդպէս էլ անարդար բան կը լինի։ Ուզում ես մի քիչ մարդավարի կեանք ունենալ, ամեն տեղից միայն անէծք ես լսում, յիշոց և յանդիմանութիւն։ Մենակ հօ մենք չենք, ինչու հէնց աչքները մեզ է տեսնում։

ՇՈՒՇԱՆ.—Օ՜խ, Դասպարն է գալիս, մայրիկ։ (Փախաւ ննջարան)։

ԳԱՅԻԱՆԷ.—Աստուած ազատի սրա չար լեզուից։

### ՏԵՍԻԼ 5.

**Դայիանէ եւ Դասպար**

ԴԱՍՊԱՐ.—(Մտաւ աջ դռնից)։ Ճշմարիտ է, որ Շուշա-



նիկի նշանը յետ էք կարում։

ԳԱՅԻԱՆԷ.—Ախ, Դասպար... այդ դու ես։ Դեռ մէկ բարեւիր, հանգստացիր։ Համեցէք, նստիր։ Ի՞նչ նորութիւն։

ԴԱՍՊԱՐ.—Աստուծոյ գառն մի ձեւանայ. ես քեզ բան եմ հարցնում։

ԳԱՅԻԱՆԷ.—Ախր ինչ է պատահել։

ԴԱՍՊԱՐ.—Ես քեզ հարցնում եմ՝ ճշմարիտ է։

ԳԱՅԻԱՆԷ.—Ի՞նչ ես դանակը կոկորդիս դրել. ես գիտեմ իմ աղջիկը։

ԴԱՍՊԱՐ.—Դէ էլ ինչու ես պատէ-պատ ընկնում. բացարձակ ասա, որ իշխանազունի արժանի աղջիկ ունես, որ Աստուած մէկին գեղեցկութիւն է տուել, միւսին փող... Մթթէ բանը այդտեղն ես ուզում հասցնել։

ԳԱՅԻԱՆԷ.—Շատ էլ լեզուիդ չափը մի մոռանայ։

ԴԱՍՊԱՐ.—Դրա համար էիր ամեն օր աղջկանդ զուքում զարդարում և թղթախաղի ժամանակ մօտներս նստեցնում։

ԳԱՅԻԱՆԷ.—Ի՞նչ անենք, նա էլ ձեր քոյրը։

ԴԱՍՊԱՐ.—Մի աշխատի արդարանալ. գեղեցիկ աղջիկները չեն կոտորուել մեզ համար։ Խելքի եկ և, եթէ հասկանում ես մօր պարտքը, տուր աղջիկդ իր նշանածին։

ԳԱՅԻԱՆԷ.—Ա՜խ, տէր Աստուած, այնպէս ես տաքացած, որ կարծես Օվանէսի եղբայրն ես գլուխներիս եկած։

ԴԱՍՊԱՐ.—Ես քեզ ասում եմ՝ աւելի քան եղբայրը։ Ուշքի եկ. ես այստեղ փող տանելու համար չեմ գալիս։ Ամբողջ մեր թաղը քեզ մատով է ցոյց տալիս։

ԳԱՅԻԱՆԷ.—Չի՞ կարելի իմանալ. դու ո՞վ, Օվանէսը ո՞վ։

ԴԱՍՊԱՐ.—Հարցրու աղջկանդ, և նա քեզ կը պատմի։ Նա բոլորը գիտէ։ Ես Օվանէսի համար զոհել եմ մի անգին, մի անկարելի բան. և հիմա էլ երդւում եմ՝ կեանքս զոհ կը բերեմ, բայց ոչ որի չեմ թոյլ տայ մի մատով անդամ մօտենայ նրա նշանածին։ Գլուխս կը տամ, բայց չեմ թողնի։

ԳԱՅԻԱՆԷ.—Դու իմ աղջկայ վրայ ոչ մի իրաւունք չունես։

ԴԱՍՊԱՐ.—Այսօրուանից քո աղջիկը չպէտք է համաձակուի խաղի ժամանակ խաղատեղեակ ոտք դնել։ Թէ չէ՝ կարող է մեծ խայտառակութիւն ծագել։ Տեսնեմ այսուհետև մայր և աղջիկ ինչպէս էք ֆրանտ Գրիգորի չորս կողմը պըտտելու։

ԳԱՅԻԱՆԷ.—Տէր Աստուած, ինչ կրակի մէջ եմ ընկել ես։

ԴԱՍՊԱՐ.—Դու ինձ ասա՝ ինչպէս է պատահել, որ Աստուած քեզ սատանայ ստեղծելու տեղ՝ կինարմատ է ստեղծել։

ԳԱՅԻԱՆԷ.—Ձեռք չեմ վերցնելու ինձնից։

ԳԱՍՊԱՐ.—Դէ, մի մոռանայ. ինչ հարկաւոր էր՝ ես քեզ արդէն ասացի. այժմ դու գիտես։ (Գնում է աջ)։

ԳԱՅԻԱՆԷ.—Հղեմ գիժ գլուխդ։ Քեզ պէս հաղարի գլուխը կը խաբեմ։ Շուշան, շալս բեր։ (Շուշանը բերեց ննջարանից)։

## ՏԵՍԻԼ Ը.

Գայիանէ եւ Շուշան

ՇՈՒՇԱՆ.—Ո՞ւր ես գնում։

ԳԱՅԻԱՆԷ.—Ես գնամ տղերքոնց համար բան-ման գնեմ։ Հա, լսու մտիկ, եթէ Գրիգորը գալու լինի, շորերդ ու մաղերդ կարգին լինի։

ՇՈՒՇԱՆ.—Ես այսպէս էլ շատ լաւ եմ։

ԳԱՅԻԱՆԷ.—Ինչքան էլ լինի, համեցէք արա, պատիւ տուր։ Տեսնում ես, որ տղերքոնց մէջին ամենքից ձեռքը բացը նա է, օգուտ տուողներս էլ նա է։ Հազիւ է Աստուած նրան հասցրել մեզ համար, պէտք է կապը ձեռնիրիս պինդ պահենք. հասկացար, որդի։

ՇՈՒՇԱՆ.—Դէ լաւ... բաւական է... հասկացանք։

## ՏԵՍԻԼ Դ.

Գայիանէ, Շուշան եւ Գրիգոր

ԳՐԻԳՈՐ.—(Աջից մտաւ, շիկ հագնուած)։ Բարի երեկոյ ձեզ։

ԳԱՅԻԱՆԷ.—Ախ, այդ դու ես Գրիգոր։ (Ծածուկ Շուշանին ստիպում է ոտք ու ձեռք ընկնել, բայց նա յուռ է)։ Համեցէք, որդի, համեցէք։

ԳՐԻԳՈՐ.—Նեղութիւն մի քաշէք Գայանէ Աբիսալամովնա։ (Ձեռք տուեց)։

ԳԱՅԻԱՆԷ.—Ի՞նչ նեղութիւն. ձեռքնիրիցս եկածը մենք միշտ պատրաստ ենք քեզ համար։

ԳՐԻԳՈՐ.—Շատ շնորհակալ եմ։ Լաւ էք, մայրիկ, ողջ առողջ էք։

ԳԱՅԻԱՆԷ.—Մեզ ի՞նչ հարցնել. դու լաւ լինես, որդի, որ մենք էլ քու շուաքումդ ապրենք. դու երիտասարդ ես, գեղեցիկ։

ԳՐԻԳՈՐ.—(Շուշանին) Ձեր մայրը կոմպլիմենտ ասելն էլ է իմացել։



ԳԱՅԻԱՆԷ.—Մի՞թէ սուտ եմ ասում։ Շատերն ունեն քո քաղցը ընութիւնը։ Դու միշտ մեզ յիշում ես, ամեն երեկոյ շնորհ ես բերում, միշտ մեր աչքի վրայ էլ տեղ ունես։

ԳՐԻԳՈՐ.—Հաւատացնում եմ, որ չափազանց շնորհակալ եմ. և ես ինքս էլ, տեսնելով որ ինձ ընդունում էք այդպէս պատուով, ուրախութեամբ եմ գալիս։

ԳԱՅԻԱՆԷ.—Ներողութիւն անես, որ քո շիկին մի փոքր յարմար չէ մեր բնակարանը։

ԳՐԻԳՈՐ.—Ի՞նչ էք ասում... Եթէ իմ աչքով նայէք, այստեղ ձեզ դրախտ կը թուայ։

ԳԱՅԻԱՆԷ.—Իսկ մենք, ինչպէս ինքդ էլ տեսնում ես, թէև մի բանի տէր չենք, բայց դեռ թշնամի էլ ունենք։

ԳՐԻԳՈՐ.—Ի՞նչ արած, ով չունի թշնամի։

ԳԱՅԻԱՆԷ.—Բայց անարդարութիւն չէ՞, որդի։ Քաղցած մեռնում ես, մի օգնութեան ձեռք մեկնող չկայ. բայց հէնց որ մի գործ ես սկսում՝ մի կտոր հաց աշխատելու համար, ամեն կողմից հաղում են։

ԳՐԻԳՈՐ.—Հասկանում եմ։ Սուտ ճգնաւորների խօսքն է՝ «լաւ է քաղցած մնալ, քան թէ անել այս և այն»։ Հեշտ է ասել «քաղցած մնալ». ապա թող մէկ փորձեն, յետոյ մենք կը տեսնենք, թէ ինչ երգ կերգեն։

ԳԱՅԻԱՆԷ.—Շատ ապրես, որդի, որ այդպէս մեզ մխիթարում ես, ուրախացնում։

ՇՈՒՇԱՆ.—Ո՛ւֆ, մայրիկ, դէ բաւական է, էլի։

ԳԱՅԻԱՆԷ.—Ահա այդպիսի խելօք, շնորհքով բաներ խօսելով՝ մի քիչ զբաղեցրու Շուշանիկին, մինչև տղերքոնց գալը... իսկ ես էլ հիմա կը վերադառնամ։ (Նորից ծածուկ ստիպում է Շուշանին յուռ չմնալ)։ Շուշան, վառիր այնտեղ՝ ննջարանում ճրագները... (Գնաց աջ դռնից)։

## ՏԵՍԻԼ Ե.

Շուշան եւ Գրիգոր

ԳՐԻԳՈՐ.—Սուսաննա Իսակիճնա, ձեր մայրը խնդրեց ինձ ձեզ զբաղեցնել. ուրեմն ինչից սկսել։

ՇՈՒՇԱՆ.—Երէկ երեկոյեան դուք ինձ խոստացաք ցոյց տալ մի քանի ֆոկուսներ։

ԳՐԻԳՈՐ.—Համեցէք, այդ կարող եմ։ (Առնում է խաղաթղթերը եւ նախ ցրում սեղանի վրայ)։ Ահա, առէք այս կար-

տը։ (Վերցնում է առանց նայելու)։ Նայեցէք. նիզակի երեքանոցը չէ՞ արդեօք։

ՇՈՒՇԱՆ.—(Առնում է եւ նայում)։ Այո՛, բայց...

ԳՐԻԳՈՐ.—Իսկ սա։ (Վերցնում է նորը եւ անում է նոյնը)։ Քառեակի եօթանոցը չէ՞։

ՇՈՒՇԱՆ.—Այո՛, բայց այդ ինչպէ՞ս էք իմանում։

ԳՐԻԳՈՐ.—Այժմ մեզ հարկաւոր է մի պօլիցիական։ Ահա, նայեցէք. պատկեր չէ՞ արդեօք, և այն էլ խաչիկի զինուորը, բեխերը սրած։

ՇՈՒՇԱՆ.—Այո՛, նա ինքն է։ Բայց դուք ինձ էլ պէտք է սովորեցնէք։

ԳՐԻԳՈՐ.—Հիմա դուք մաքներումդ կասէք, թէ ես դիմակաւորուած մի բախտախնդիր եմ և գա իս եմ մարդկանց գլուխները խաբելու։ Բայց ոչ, հաւատացնում եմ, առաջ նայեցի, յետոյ ասացի։

ՇՈՒՇԱՆ.—Ոչ, ոչ, դուք ինձ էլ սովորեցրէք։ Սովորեցրէք, թէ ինչպէս էք խաղում, որ միշտ տանում էք։

ԳՐԻԳՈՐ.—Օ՜... Սխալվում էք։ Երբ ես լսկնում եմ ինձնից ճարպիկ խաղացողների ձեռքը, միշտ տարվում եմ։ (Երկու մատով վերցնում է մի թուղթ)։ Այժմ նայեցէք։ Ի՞նչ թուղթ է սա։ (Ինքը չի նայում)։

ՇՈՒՇԱՆ.—Սրտի իննանոցը։

ԳՐԻԳՈՐ.—(Ձեռքը ճարպիկ շարժելով)։ Մի՞թէ...(Փչում է նոյն թղթի վրայ)։ Լա՛ւ նայեցէք։

ՇՈՒՇԱՆ.—Խաչի թագաւորը դառաւ։

ԳՐԻԳՈՐ.—(Նոյն)... Մի՞թէ թագաւորը...

ՇՈՒՇԱՆ.—Հիմա էլ քառեակի թագուհին։

ԳՐԻԳՈՐ.—(Նոյն)։ Եւ ոչ զինուորը։

ՇՈՒՇԱՆ.—Այո՛, իսկ որ զինուորը... Հրաշք է, Աստուած վկայ։

ԳՐԻԳՈՐ.—(Նոյն)։ Իսկ ես կարծեցի իննանոցը...

ՇՈՒՇԱՆ.—Հա-հա-հա... Այո՛, իսկ որ իննանոցը։ Ախը այդ ինչպէ՞ս էք անում։

ԳՐԻԳՈՐ.—Դէ այժմ խօսենք ուրիշ բան, թէ չէ՝ շատ կը սովորես, շուտ կը պառաւես։ (Խառնում է թղթերը)։

ՇՈՒՇԱՆ.—Ոչ, ոչ, ոչ. դուք անպատճառ ինձ էլ պէտք է սովորեցնէք։

ԳՐԻԳՈՐ.—Բայց մեզ կարող են խանգարել։

ՇՈՒՇԱՆ.—Անցնենք այնտեղ։ (Վերցրեց թղթերը, գնացին ներսի ջարան)։ Այստեղ մեզ ոչ ոք չի խանգարի. տղերքը դեռ շուտով չեն գայ։ (Ծածուկ աջ դռանը նայեց, յետոյ ներսի դուռը ծածկեց)։



## ՏԵՍԻԼ Թ.

Դասպար, յետոյ Գրիգոր, Շուշանիկ, Մարգար եւ 3 4 խաղացողներ

ԳԱՍՊԱՐ.—(Մտաւ մեծակ աջից)։ Ոչ ոք չկայ։ Մի՞թէ ես սխալուեցի։ Ոչ, ես նրան տեսայ. նա ամենից ծածուկ շրջեց անկիւնը և երևի ի հարկէ այստեղ մտաւ։ Գուցէ այստեղ է։ (Մօտեցաւ խաղասենեակի դռան եւ ականջ դրեց)։ Աստուած մի արասցէ։ (Ապշեց)։ Ա՜... Ահա թէ ինչ։ Գրիգոր Ստեպանիչ... Գրիգոր Ստեպանիչ։ (Թփեց դռանը)։

ԳՐԻԳՈՐ.—(Մտաւ խաղասենեակից)։ Ի՞նչ է պատահել։ (Սառն) Ա՜, Գասպար Իվանիչ... ի՞նչ կայ։

ԳԱՍՊԱՐ.—Հը՜... ոչինչ։ Տղերքը գալիս են.. ներեցէք. ես մոռացայ քաղաքավարութեան ձևերը։ (Մտնում են տղերքը աջից)։

ԳՐԻԳՈՐ.—Ոչինչ, մենք հէնց ձեզ էինք սպասում։

ՇՈՒՇԱՆ.—(Եկաւ ներսի ջարանից)։ Ի՞նչ է պատահել... ես վախեցայ։

ԳԱՍՊԱՐ.—Ա՜խ, ներեցէք ի սէր Աստուծոյ։

ԳՐԻԳՈՐ.—Երևի վազելով էք եկել։ հանգստացէք մի փոքր, թէ չէ՝ այդ ի՞նչ է, ձեր երեսին գոյն չկայ։ (Տղերանց)։ Համբեցէք խնդրեմ։ (Գնաց ներսի ջարան, տղերքն էլ հետեւեցին)։

ԳԱՍՊԱՐ.—(Շուշանիկն)։ Ուշքի եկէք. բանները շատ էլ չեն սպիտակացնի։

ՇՈՒՇԱՆ.—Ի՞նչ է պատահել։

ԳԱՍՊԱՐ.—Ոչ բարով՝ նշանուած աղջիկ էք դուք. մի՞թէ չէք տեսնում, որ ես ինձ կորցրել եմ։

ՇՈՒՇԱՆ.—(Վախեցած)։ Ի՞նչ ես ուզում ինձնից... (Փախաւ ներսի ջարան եւ դուռը ծածկեց)։

## ՏԵՍԻԼ 10

Դասպար եւ Դայիանիկ

ԳԱՍՊԱՐ.—(Դայիանիկն, ունենալով ձեռքին գնած բաներ, մտաւ աջից)։ Ա՜, դու եկար վերջապէս։

ԴԱՅԻԱՆԻԿ.—Ի՞նչ է, ի՞նչ է եղել քեզ։ (Դնում է սեղանի վրայ ձեռքի բաները)։

ԳԱՍՊԱՐ.—Լսիր, կախարդ տատանայ։ վճռուած է, քեզ նման վարպետ կնոջ աղջիկը էլ պէտք չէ Օվանէսին։

ԳԱՅԻԱՆԷ.—Ի՞նչ ես գիժ գիժ դուրս տալիս։

ԳԱՍՊԱՐ —Այո, այո, չպէտք է խաբել նրան։ Նա մի մաքուր և անարատ տղայ է։ Նա նման չէ մեզ... այս աւազակ և շարլատան շներիս, նա չպէտք է պսակուի քո աղջկայ հետ. հակառակ դէպքում՝ ես այս դանակը կը խրեմ նրա փորը և աղիքները ցրիւ կը տամ։ Աւելի լաւ է մի յիսուն կօպէկանոց սիրուհի ունենայ նա, քան թէ յիմարուի... և...

ԳԱՅԻԱՆԷ.—Լիրը անզգամ, ինչպէս ես համարձակվում։

ԳԱՍՊԱՐ.—Ձայնդ։ էլ խօսելու ժամանակ չէ։ Դէ, գնա այնտեղից դուրս քաշիր աղջկանդ, թէ չէ՝ արիւնը գլխովս է տալիս։

ԳԱՅԻԱՆԷ.—Դու ինձ վախեցնում ես. ինչ է պատահել, ծրտեղ է երեխաս։

ԳԱՍՊԱՐ.—Այնտեղ է «երեխադ», նրա մօտ. նայիր, գուցէ հարկաւոր լինի այնտեղ ուղղել։

ԳԱՅԻԱՆԷ.— Խելագարուել ես, Գասպար։

ԳԱՍՊԱՐ.—Այո, դու ճշմարիտ ես ասում. կարող է պատահել, որ ես խելագարուեմ։ Լսիր, պառաւ, գուցէ երբ մերժելու լինես Օվանէսին, քեզ հարկաւոր լինի մի պատրուակ։ Հըմ, չէ՞ որ երևելի վարպետն ես սուտեր և պատրուակներ հնարելու մէջ։ Ուրեմն չմոռանաս. ասա նրան՝ «սիրական ունեմ». և եթէ հարկաւոր լինի մի վկայ, ցոյց տուր ինձ և ասա, թէ ես եմ ասել։ Դէ, շուտ, գնա, դուրս քաշիր նրան այնտեղից... (Ցած)։ Գուցէ ճմլուած լինի անկողինը... մարդիկ կան այնտեղ, շուտ, ամօթ է, (Բաշում է բեռից) Եկ, շուտ արա։

ԳԱՅԻԱՆԷ.— Ինչո՞ւ է խօսում յիմարը։ (Մտան ննջարան, քիչ յետոյ Գասպարը ճանապարհ տուեց բեմ գալու Շուշանին)։

## ՏԵՍԻԼ 11

### Շուշան եւ Օվանէս

ՇՈՒՇԱՆ —(Մենակ)։ Սարսափելի է։ Անպիտանի աչքերը կատաղած գայլի աչքերի են նման։

ՕՎԱՆԷՍ.—(Մտաւ աջ դռնից)։ Բարի երեկոյ, Շուշանիկ. ինչ է պատահել, սիրելիս։ Ծնողներս եղել են այստեղ. նրանք ասացին, որ դու հիւանդ ես։ (Ձեռք է տալիս)։

ՇՈՒՇԱՆ.—Ինչո՞ւ պէտք է հիւանդ լինէինք. փառք Աստուծոյ։



ՕՎԱՆԷՍ.—Այդ ինչ եղանակով ես խօսում ինձ հետ։ Ձլինի՞ նեղացած ես ինձանից։

ՇՈՒՇԱՆ.—Ի՞նչ նեղանալու բան կայ։

ՕՎԱՆԷՍ.—Ի հարկէ, մեզ ինչ կը պատկանի միմեանցից նեղանալ։ Արի նստենք միասին։

ՇՈՒՇԱՆ.—Նստում էք՝ նստեցէք, ձեզ ոչ է խանգարում։

ՕՎԱՆԷՍ.—Դէ լաւ. մօտեցիր, տուր ինձ քո ձեռքը։ Այդ ինչ աչքերով ես ինձ նայում։

ՇՈՒՇԱՆ.—Օ՜ֆ, ինչ էք ուզում ինձանից։

ՕՎԱՆԷՍ.—Իմ սիրելի։ Եթէ նեղացած ես ինձանից, որ ամբողջ օրը քո մօտ չեմ եկել, սխալվում ես։ Ճիշտը ասեմ՝ ցերեկով ամաչում եմ. բացի այդ, գործի ժամանակ ամբողջ օրը ոտքի վրայ շիտակ կանգնելուց յոգնած եմ լինում այնպէս, որ անհամբեր սպասում եմ, թէ երբ պէտք է կիրակին գայ, որ մի լաւ հանգստանամ։ Դժուար բան է, Շուշանիկ։ Սրա կապրիզը տար, նրա կապրիզը տար, կեղծ ժպտա, կեղծ քաղաքավարութիւն արա, խղճիդ ընդդէմ սուտ ասա և գովիր այն ապրանքը, որը գովասանքի և ոչ մի արժանաւորութիւն չունի։ Իմ ընտաւորութեան համեմատ գործ չէ, Շուշան. և եթէ մի անգամ ընկած չլինէի, կը թքէի և կը հեռանայի։ Սակայն ես բոլորը մոռանում եմ, երբ քեզ եմ յիշում։ Ի՜նչ քաղցրութիւն և ինչ երջանկութիւն է՝ լինել նշանուած և միևնոյն ժամանակ սիրահարուած։ Բայց դու ինչու ես ինձնից այդպէս խորշում։ Հայրս ասում էր՝ կողքդ է ծակում, ատամդ է ցաւում, և թէ դու հիւանդ ես. ճիշտ է։

ՇՈՒՇԱՆ.—Ա՜խ, ձեռք վերցրէք ինձնից։ Հիւանդ, հիւանդ, հիւանդ։

ՕՎԱՆԷՍ.— Իմ սիրելիս, ինչու ես բարկանում։ Եթէ ձանձրացնում եմ, ասա, որ ես հանգիստ թողնեմ քեզ։ Կամենում ես՝ դու պառկիր, իսկ ես մահճակալիդ մօտ կը նստեմ կողքիդ, և մենք կը խօսենք։ Կուզես՝ պատմեմ քեզ նորութիւններ։ Ես նկատել եմ, որ մարդիկ դէպի ամուսնացողները մի առանձին յարգանքով են վերաբերվում։ Տես, երէկ պարոնս շնորհաւորեց նշանադրութիւնս, յուսնուարից խոստացաւ աւելացնել ռոճիկս։ Սիրելիս, գուցէ ես քեզ ձանձրացնում եմ, որ բոլոր ժամանակ միմիայն իմ մասին եմ խօսում։

ՇՈՒՇԱՆ.—Ինձ համար միևնոյն է, ես ձեզ ականջ չեմ դնում։

ՕՎԱՆԷՍ.—Ա՜խ դու իմ խորամանկ գեղեցկուհիս. և դու կամենում ես, որ ես քեզ հաւատամ։

ՇՈՒՇԱՆ.—Շատ հարկաւոր է. կոզէք հաւատացէք, կուզէք ոչ։

ՕՎԱՆԷՍ.—Դէ լաւ, թող այդպիսի՞ կատակները։

ՇՈՒՇԱՆ.—Իսկի էլ կատակ չեմ անում։

ՕՎԱՆԷՍ.—Լսիր, սիրելիս, ես մի փոքր զգայուն եմ, և կարող է վրաս վատ ազդել։

ՇՈՒՇԱՆ.—Ուրեմն աւելի լաւ է ոչինչ չխօսել. պրծաւ գնաց։

ՕՎԱՆԷՍ.—Ապա ի՞նչ անենք, եթէ չխօսենք։

ՇՈՒՇԱՆ.—Օ՜հ, ի սէր Աստուծոյ վերջացրէք. ես գործ ունեմ։

ՕՎԱՆԷՍ.—Մի՞թէ քեզ համար անհնարին է մի քանի րոպէ նուիրել քո նշանածին։

ՇՈՒՇԱՆ.—Հը՛մ... նշանած։

ՕՎԱՆԷՍ.—Ի՞նչ է նշանակում քո այդ քմծիծաղը։

ՇՈՒՇԱՆ.—Ինչ ուզում էք՝ այն էլ նշանակում է։

ՕՎԱՆԷՍ.—Դէ լաւ, հաշտուենք։ (Բռնում է նրա ձեռքը)։ Այդ ի՞նչ է, ուր է նշանիդ մատանին։

ՇՈՒՇԱՆ.—Սպասեցէք, ես իսկոյն կը վերադարձնեմ։

ՕՎԱՆԷՍ.—Մտածում ես, թէ ինչ ես ասում... Նա միշտ պէտք է մատիդ լինի։ Տեսնում ես (իր մատանին ցոյց տալով)։ սա այստեղից միմիայն... ոչ, ոչ, կամ յաւիտեան մատիս, կամ կեանքս էլ հետը։ Դէ գնա, վեր առ մատանիդ և անցրու մատիդ։ Գնա, Շուշան, գնա, սիրելիս, թէ չէ՝ կը նեղանամ և, Աստուած վկայ, շատ կը նեղանամ... գնա...

ՇՈՒՇԱՆ.—Չեմ ուզում։

ՕՎԱՆԷՍ.—Հը՛մ... երեխայ։ Դու խելագարուե՞լ ես. մտածում ես, թէ ինչ դառն կատակ ես անում։

ՇՈՒՇԱՆ.—Իսկի էլ կատակ չեմ անում։

ՕՎԱՆԷՍ.—Ճի՞շտ... (Նորից տատանուելով)։ Ի՞նչ պատահեց ինձ (ցնցելով իրան)։ Ուրեմն կատակ չես անում։ (Վճռողաբար)։ Այդ բանը ես քեզ չեմ ների... ի՞նչ եմ ասում։ Լսիր, սիրելիս, լսիր, անփորձ աղջիկ...։ Ասա, որ դու երեխայ ես, որ անզգուշութեամբ թռաւ բերանիցդ այդ խօսքը։ (Բռնում է նրա ձեռքը)։

ՇՈՒՇԱՆ.—Ես ոչինչ չեմ ասի։

ՕՎԱՆԷՍ.—Չե՞ս ասի...

### ՏԵՍԻԼ 12

Շուշան, Օվանէս եւ Գայիանէ

ԳԱՅԻԱՆԷ.—(Մտաւ խաղասենեակից)։ Այդ ի՞նչ է, Օվանէս։



Z.U.K.Z. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A Публичная Библиотека
7/XI 1922
ИМЯНИ А. МЯСНИКЯНА

ՇՈՒՇԱՆ.—Բաց թող էք, բաց թող էք։ (Ազատուելով գնաց ննջարան)։

### ՏԵՍԻԼ 13

Օվանէս եւ Գայիանէ

ՕՎԱՆԷՍ.—Ի՞նչ է ասում քո աղջիկը, ի՞նչ է ասում քո աղջիկը։

ԳԱՅԻԱՆԷ.—Էլ ի՞նչ պիտի ասի, որդի։ Չեմ իմանում որ չար կախարդն է գիր արել։ Աչքերին բաներ են երևում, քնի մէջ մեռելների հետ է խօսում։ Քանի անգամ գիշերը ջրհորի բերանից եմ յետ բերել։ Ասում է՝ «ինձ այնտեղից ձայն է կանչում»։ Աստուծոյ սիրուն, որդի, ինչ ասուել եմ՝ մեր ամ տար աղջիկս ձեռքիցս գնում է։ Էլ խաւարեց ինձ համար աշխարհը։ (Լալով)։ Մի՞թէ այս օրի համար էի մեծացրել քեզ, իմ փայլուն ծաղիկ։

ՕՎԱՆԷՍ.—Չեմ իմանում, արդեօք զառանցանքի մէջ եմ գտնվում ես։

ԳԱՅԻԱՆԷ.—Մի՞թէ չնկատեցիր նրա անկապ անկապ խօսքերը։ Ի՞նչ կը լինի իմ վիճակը, եթէ նա խելագարուի։

ՕՎԱՆԷՍ.—Նա չի խելագարուի, այլ ես...

ԳԱՅԻԱՆԷ.—Դու տղամարդ ես, որդի։ քեզ համար ի՞նչ կայ։ Դու կը գնաս՝ քեզ համար մի ուրիշ աղջիկ կը գտնես։

ՕՎԱՆԷՍ.—Մի՞ ասի ինձ այդ խօսքերը... Մի՞թէ չես նկատում, որ ես ամբողջ մարմնովս դողում եմ...

ԳԱՅԻԱՆԷ.—Մեղանում մեղք չկայ, որդի, անիծուի չար կախարդի գլուխը։

ՕՎԱՆԷՍ.—Լսիր. եթէ այդ չար կախարդը դու չես, քու հասակիդ չի վայելի այդ սատանայական սուտերը, այդ առասպելները։ Շուտ, գնա նրան խելքի բեր. գնա հասկացրու նրան, որ ես ուրիշների նման չեմ եղել, որ սա իմ առաջին սէրն է, մաքուր և անարատ իմ առաջին սէրը. գնա, աղաչում եմ, խելքի բեր նրան... ես կը ներեմ նրան։

ԳԱՅԻԱՆԷ.—Ես ի՞նչ կարող եմ անել, ինչու էք ինձ երկու կրակի մէջ այրում։

ՕՎԱՆԷՍ.—Դու ոչինչ չե՞ս կարող անել, դու, որ մայրն ես։ (Բռնում է նրա թեւերից)։

ԳԱՅԻԱՆԷ.—Բաց թող ինձ... ես մայր չեմ։

ՕՎԱՆԷՍ.—Ապա ի՞նչ ես դու, ո՞վ ես դու։

ԳԱՅԻԱՆԷ.—Բաց թող, ասում եմ. ինչ ես թեւերս կոտրում։

ՕՎԱՆԷՍ.—(Բաց թողնելով)։ Այն ժամանակ... ոչ, ոչ... իմ ձեռը չի բարձրանայ նրա վրայ։ Դէ գոնէ ասա ճշմարիտը, ինչ է պատճառը։

ԳԱՅԻԱՆԷ.—Մենք քեզանից այդպիսի բան չէինք սպասում, Օվանէս։

ՕՎԱՆԷՍ.—Ինչի՞ մասին է խօսքդ, շուտ։

ԳԱՅԻԱՆԷ.—Ես իմ աղջիկը մի սիրուհի պահողի համար չեմ մեծացրել։

ՕՎԱՆԷՍ.—Դու իսկոյն պէտք է յայտնես, թէ ո՞ր շան ծնունդն է համարձակուել այդ սուտը հնարել։

ԳԱՅԻԱՆԷ.—(Մօտենալով ննջարանի դռանը)։ Խօսք տուր, որ խայտառակութիւն չես սարքի։

ՕՎԱՆԷՍ.—Ուրեմն այստեղ է այն լիրը ստախօսը (Մօտենում է ննջարանի դռանը)։

ԳԱՅԻԱՆԷ.—Սպասիր... (Չի թողնում)։

ՕՎԱՆԷՍ.—(Հրում է նրան մի կողմ)։ Հեռացիր, ասում եմ. էյ, ո՞վ է համարձակուել։ (Թփում է։ Ննջարանի դռները բացվում են, եւ երեւում են լոյսի մէջ նստոտած խաղացողները, որոնք իսկոյն ոտքի են կանգնում)։ Այդ ի՞նչ է։

ԳԱՅԻԱՆԷ.—(Գասպարին, որ թղթերը ձեռին առաջ է եկել)։ Դէ, տուր նրա պատասխանը։

ՕՎԱՆԷՍ.—Ինչպէ՞ս. նա՞ է ասել։ Դո՞ւ ես ասել, Գասպար, դո՞ւ...

ԳԱՍՊԱՐ.—Այո՛... ես։

ՕՎԱՆԷՍ.—Դո՞ւ, դո՞ւ։ (Ռունում է երեսը, յետ-յետ է գնում, ընկնում մի աթոռի վրայ, լալիս)։ Մի նայիր ինձ այդպէս, մի նայիր։ (Ամենքը ապշած են։ Գասպարի ձեռքից թափվում են թղթերը)։

ՎԱՐԱԳՈՑ

---

# ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ

Բակ։ Աջ կողմը՝ մի դուռ մի պատուհանով տնակ, որի առաջ գետնից քիչ բարձր պատշգամբ։ Բակի ձախ կողմը պարտէզ։ Խորքում կօշկակարի սեղան՝ գործիքներով՝ և չորս կողմը 4—5 կօշկակարներ նստած։ Մէջտեղի պատի վրայ արհեստանոցի եռակի դուռը, յետոյ էլ պատուհան։ Ամառուայ շոգի պատճառով գործում են բակում։ Խանութի ներսից բեմ եկողները նախ եբեւում են պատուհանից։ Պարտէզի հնացած ցանկապատի վրայ և ծառերից մինչև պատշգամբի սիւնը թոկ, վրան լուացք կախած։ Երեկոյի մութը կոխում է, սկզբից լսվում է կօշկակարի կաշի ծեծելու և եռկից զանգի ձայներ։

## ՏԵՍԻԼ 1

Օվանէս, Յարութիւն, Մարիամ, Արմենակ եւ կօշկակարներ

(Օվանէսը պատշգամբի ծայրին նստած՝ ծխում է, ապուշի նման, գունատ, մռայլ, զգզուած։ Յարութիւնը գոգնոցով, ակնոցներով՝ գործում է։ Մարիամը, որ լուացքներն էր տնտղում մօտեցաւ Օվանէսին)։

ՄԱՐԻԱՄ.—Ապա ի՞նչ ասեմ, որդի. վաղ առաւօտեան վեր էիր կենում, գնում գործիդ, ուշ երեկոյեան ուրախ-ուրախ վերադառնում էիր. ծնողդ էլ տեսնելով՝ ուրախանում էր, որ հասած որդի ունի, սև օրի համար մի յուսատեղի։

ՕՎԱՆԷՍ.—Ա՜խ, մայրիկ, բաւական է. գոնէ մի օր թողէք ինձ հանգիստ մնամ։

ՄԱՐԻԱՄ.—Ի՞նչ անեմ, որդի. մի՞թէ այս օրուայ համար եմ մեծացրել քեզ։

ՕՎԱՆԷՍ.—Ա՜խ, գլուխս տրաքվում է... Մի՞թէ մի ուրիշ հոգս չունէք։

ՄԱՐԻԱՄ.—Մեր հոգն էլ դու ես, սիրելիս. չէ՞ որ մեր աչքի սև ու սպիտակն էլ դու ես։

ՕՎԱՆԷՍ.—Դէ հանգստացիր, մայրիկ, բաւական է. ախր մի՞թէ ամեն օր միևնոյնը կրկնելով չկշտացար։ Հաւատացնում եմ, շատ խօսէք՝ գլուխս վեր կառնեմ կը կորչեմ այս քաղաքից։

ՄԱՐԻԱՄ.—Չխօսեմ ի՞նչ անեմ, քար հօ չէ սիրտս. չէ՞ որ սև կապոյտ մայր եմ։ Մի՞թէ ես քեզ նրա համար եմ մեծացրել, որ գիշերները ուշ տուն գալդ, արբած լինելդ տեսնեմ։

ՕՎԱՆԷՍ.—Ոչինչ, կեանքումս շատ եմ ծիծաղել սուտ սուտ վշտից արբեցողների վրայ, հիմա էլ հերթը ինձ է եկել։

ՄԱՐԻԱՄ.—Ա՜խ, Օվանէս, աւելի լաւ է կրակ տաս ու ինձ սպանես, քան թէ քո բերանից ես այդպիսի խօսքեր լսեմ. մի՞թէ աշխարհը քանդվեց քեզ համար, որդի։

ՕՎԱՆԷՍ.—(Դառն)։ Ո՞վ է ասում. ընդհակառակը՝ բախտը բացել է իրա դուռը և մեզ համեցէք է անում։

ՑԱՐՈՒԹԻՒՆ.—(Մօտենալով)։ Ինչո՞ւ համար ես խօսեցնում նրան։

ՄԱՐԻԱՄ.—Ապա ի՞նչ անեմ ջուր տարած. մի՞թէ ծնող չեմ ես։

ՑԱՐՈՒԹԻՒՆ.—Նա ի՞նչ է հասկանում, թէ ինչ ասել է ծնող։

ՄԱՐԻԱՄ.—Մի աղջկայ համար օրներս այսպէս սև է արել։

ՑԱՐՈՒԹԻՒՆ.—Դու կարծում ես՝ այս պատմութիւնը մի աղջկայ պատճառով է։

ՄԱՐԻԱՄ.—Ապա ի՞նչ է։

ՑԱՐՈՒԹԻՒՆ.—Պատճառը այն է, որ նա սիրտ չունի, ուրիշի համար այրուող սիրտ։ Պատճառը այս ապականուած ժամանակն է։ Մէկ աչքդ բաց, տես ի՞նչ սերունդ է առաջ եկել։ Ամենքը ոտքի են կանգնել, ամենքը աչքները արիւն կոխած իրաւունք են բղաւում, բայց ուզում են ոչինչ չարած ապրել ազատ, անհոգ՝ ինչպէս երկնքի թռչունը։ Ահա, մտիկ արա։ (Ցոյց տուաւ իր բանուորներին)։ Սրա կտորը նրանք չեն։ Սրանք բոլորը մի խմորից են հունցած, և ես երեսներին եմ ասում, Մարիամ. խօսքով երկնքից աստղեր վեր կը բերեն, իսկ ձեռքով, եթէ հնար լինի, փետուր չեն ուզի շարժել։

ՄԱՐԻԱՄ.—Դէ լաւ, դու էլ այս ժամաժամքին այն խեղճերին մի խառնի մէջտեղ։

ՑԱՐՈՒԹԻՒՆ.—Ապա ի՞նչ անեմ, երբ ոտնակոխ է եղել ամեն ինչ. էլ ոչ օրէնք կայ, ոչ կարգ, ոչ մեծ կայ, ոչ փոքր։ Այն փչանալու Մարգարն էլ տես գլխիս ինչ է բերել։ Վաղը առաւօտ կօշիկ պիտի յանձնեմ, կօշիկը պատրաստ, իսկ կրունկ կապելը թողել է և առաւօտը ժամը 11-ից կորել է, էլ չկայ։ Եւ ո՞վ է սրանց ամենքին գժուացնողը. իմ հարազատ եղբօր որդին, այն փչանալու Արամը։

ՕՎԱՆԷՍ.—Նրան էլ չես հաւանում։

ՑԱՐՈՒԹԻՒՆ.—Ինչո՞ւ չես մի փոքրիկ երեխայ, որ բռնէի ականջից և ապտակէի բերանիդ։



ՕՎԱՆԷՍ.—Ինչո՞ւ համար։

ՑԱՐՈՒԹԻՒՆ.—Նրա համար, որ յիշեցնէի քեզ քո չափը։ Եթէ դու լինէիր մի ճնճղուկի ձագ, ես քեզ վաղուց ասած կը լինէի՝ «Բաւական է որքան պահել-մեծացրել եմ քեզ։ Այժմ, երբ թեւերդ աճել են և դու ինքնագլուխ կարող ես թռչել, գնա թռիր, մեր մէջ այլևս ոչ մի կապ չկայ»։ Բայց աստուածութիւնը քեզ բանական մարդ է ստեղծել, ուրեմն մտածիր, թէ ինչ ես եղել մինչև հիմա մեզ համար. փայտի ձի, որին հեծնողը ինքը պիտի առաջ քաշի։ Ահա մեծացրել, քեզ ինչ հասակի ենք հասցրել, բայց ի՞նչ օգուտ ենք ստացել քեզանից մեր կեանքում։ Ասա՛ ինձ, մի՞թէ կամենում ես հիմա էլ թքել այն ջրհորի մէջ, որտեղից 27 տարի շարունակ ջուր ես խմել։

ՄԱՐԻԱՄ.—Ո՜ւֆ, տէր Աստուած...

ՕՎԱՆԷՍ.—Ահա թէ խօսքը նորից որտեղ եկաւ։

ՑԱՐՈՒԹԻՒՆ.—Ապա ինչի՞ մասին խօսեմ։ Ձեռքերս դողում են և ես այլևս հազիւ եմ կարողանում գործիք բռնել։ Ահա, գնա տես, մի կրունկ կապելու համար մարմնիս մէջ ոյժ չէ մնացել։ Ես կարծում էի, թէ մի օր վերջապէս կը գաս, կը կանգնես քո զառամեալ հօրդ առաջ և կասես. «Հայր, բաւական է, 55 տարի շատ ատամներով կաշի ձգելով ատամներդ են թափուել, շատ կռացած գործելուց՝ աչքերիդ լոյսն է նուազել, թիակներիդ ոսկորները դուրս ցցուել. բաւական է. գնա և կեանքիդ վերջին օրերը մի քիչ էլ դու հանգստացիր, որովհետև խեղճ ես, յոգնել ես արդէն»։ Ո՞ւր է, ինչո՞ւ քեզանից ես այդ չեմ լսում։

ՕՎԱՆԷՍ.—Այդ բոլորը շատ ճշմարիտ ես ասում։

ՑԱՐՈՒԹԻՒՆ.—Ուրեմն ինչո՞ւ ես ինձ սրանց ձեռքին գերի շինել։ Է՜յ, վառեցէք մոմերը։ (Բանուորները վառեցին մի քանի եկեղեցական մոմեր՝ գործիքի սեղանի վրայ)։

ՕՎԱՆԷՍ.—Բայց մի՞թէ ես այդպէս էի և առաջ. մի՞թէ մոռացել էք, որ կար ժամանակ, երբ ես էլ ոսկի երազներ էի տեսնում։

ՑԱՐՈՒԹԻՒՆ.—Իսկ հիմա ի՞նչն է խանգարել քո քունը։

ՕՎԱՆԷՍ.—Եւ այդ հարցնում ես դու։

ՄԱՐԻԱՄ.—Նա ի՞նչ անէր, որդի. հօ նա քո վատը ուզենալով չարաւ այդ բանը։ Ի՞նչ անենք, որ աներեսների հանդիպեցինք. վեր կենայինք մորթէի՞նք նրանց։

ՕՎԱՆԷՍ.—Իսկ նրանց արածը. մայրիկ, մի՞թէ սա առանց դանակի մարդ մորթելուց պակաս է մի բանով։

ՄԱՐԻԱՄ.—Մի՛ ասի, որդի, նրանք հօ քեզ չեն սպանել։

ՕՎԱՆԷՍ.—Աւելի լաւ է մարդուն սպանել, քան կենդանի թաղել։ Նրանք ինձ փակել են տան անկիւնում, նրանք ինձ ամբողջ քաղաքի աչքին ծիծաղի առարկայ են շինել, և այդ՝ ձեր կարծիքով ոչինչ։ Ազատ ազատ օդի մէջ թռչում էի. նրանք կտրտեցին թեւերս, նետով խփեցին սրտիս մէջ տեղին... Իսկ դուք ինչ-որ որդիական պարտքի մասին էք խօսում։ Իսկ այն մասին, որ ես մարդ եմ... վիրաւորուած... Է՞հ ինչ պահանջեմ ձեզնից, երբ վաղուց է արիւնը սառել ձեր երակների մէջ։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Իսկ դու, որ արիւնդ եռում է երակներիդ մէջ, ինչ պիտի անես։

ՕՎԱՆԷՍ.—(Ցաղրուած)։ Ահա դուք ինքներդ էլ հօ տեսնում էք. պատիւս ցեխի հետ հաւասարուելուց յետոյ էլ, ես ձեռքերս ծալած նստած եմ։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Է՞հ, Մարիամ... եթէ դու ժամանակին բացած լինէիր իմ աչքը, չէր լինի և այս պատմութիւնը։

ՕՎԱՆԷՍ.—Ինչի՞ մասին է խօսքը։

ՄԱՐԻԱՄ.—Էէ՛, թողէք ինձ, այս կիրակնամուտին ինչ կը պատկանի մեզ ուրիշներից չարախօսել։

ՕՎԱՆԷՍ.—Եթէ դու մի բան գիտէիր, ինչու ժամանակին չէիր մտածում այդ մասին։ Թէ՞ ինձ մխիթարելու համար ես հնարում այդ սուտը։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Զաւ դէր լեղուիդ. ինչպէս ես համարձակվում իմ առաջ նրան այդպիսի քաջ խօսք ասել։

ՄԱՐԻԱՄ.—Աստուծոյ սիրոյն, մի կռուի, առանց այն էլ երեխայիս սիրտը դառնացած է։

ՕՎԱՆԷՍ.—(Խիստ)... Ա՜հ. շատ ձեզ հետ գլուխ դնողը գժուել կարող է, գժուել։ (Բարկացած գնում է աջ դռնից)։

ՄԱՐԻԱՄ.—Մարդ, ինչու ես կրակի վրայ իւղ ածում։ Արամին ես ինքս եմ խնդրել, որ մէկ մէկ գայ, խօսի հետը։ Լեղուիդ տէրութիւն անել չես կարողանում։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Գնա, գնա նրա ետևից, փաղաքշիր, սիրտը առ. տեսնում ես, որ պառաւել եմ, խելքս տանուլ եմ տուել։

ՄԱՐԻԱՄ. — Դէ հանգստացիր, տղերքը նկատում են։ (Գնաց աջ)։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Խօսում ես՝ վայ է, չես խօսում՝ վակլախ է։



## ՏԵՍԻԼ 2

### Յարութիւն, Արմենակ եւ բանուորներ

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Իսկ դուք ինչու էք բերանները ծռել պարապ նստել։

ԱՐՄԵՆԱԿ.—Ապա ի՞նչ անենք։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ինչպէ՞ս թէ ինչ անէք։

ԱՐՄԵՆԱԿ.—Չէ՞ որ շաբաթ երեկոյ է, պէտք է տուն գնալ։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Իսկ ձեզ գործ յանձնեցի, ինչ արիք։ (Խլում է մեկի ձեռքից կօշիկը)։ Այդ ի՞նչ է, մի կրունկ կապելն էլ չէք կարողացել, նոյն իսկ ձեռք էլ չէք տուել. ի՞նչ է նշանակում այդ։

ԱՐՄԵՆԱԿ.—Ով սկսել է, նա էլ կարող է վերջացնել։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Քեզ ո՞վ է հարցնում։ (Շպրտում է կօշիկը մի կողմ)։

ԱՐՄԵՆԱԿ.—Միևնոյն է, մենք ամենքս էլ մէկ ենք։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ա՜, ուրեմն խօսքներդ մէկ էք արել, ուրեմն վճռել էք երեսիս կանգնել։ Չէ, ասացէք ինձ. ինչու էք Աստուծոյ աչքից ընկել։ Խիստ եմ եղել, ասացէք՝ «խիստ ես եղել». վատ եմ եղել, ասացէք՝ «վատ ես եղել»։

ԱՐՄԵՆԱԿ.—Ո՞վ է ասում, որ դուք վատ մարդ էք։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ապա եթէ լաւ եմ եղել, ինչու էք ոտքներդ բարձրացրել։ Այդ ի՞նչ ապստամբութիւն է։

ԱՐՄԵՆԱԿ.—Ինչու պիտի ապստամբուենք. ինչպէս ուրիշները՝ այնպէս էլ մենք։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Շատ լաւ. ինչպէս ուրիշները՝ այնպէս էլ դուք։ Ապա ինչու չէք օրինակը ինձանից վերցնում. չէ՞ որ աշակերտը պարտաւոր է օրինակը վերցնել իր վարպետից։ Լսեցէք։ Եօթ տարի աշակերտ ժամանակս գործել եմ օրական 16 ժամ։ (Աշակերտները տրտունջի շարժումներ են անում)։ Վարպետի տան բոլոր գործերը ես եմ արել, և քիչ է մնացել, որ տան շորերն էլ ինձ լուանալ տան։ (Նոյն)։ Ամիսներով գլուխս տաք ջրի և սապոնի երես չի տեսել։ Քնել եմ խանութի ետեւում, կեղտոտ անկողնում, ձմեռը ցրտից սարսռելով։ Շորերս պատռտուած, մարմինս ադտոտուած, բայց ուշ չեմ արել։ (Նոյն)։ Զարչարուել եմ շան նման և նրա նման էլ տիրոջս հաւատարիմ եմ եղել։ Իսկ դուք։

ԱՐՄԵՆԱԿ.—Մի նեղանաք, վարպետ։ Այդ բոլորը անցած

ժամանակի բաներ են։ Տղերքը միացած ասում են՝ «մենք այդպէս չենք ուզում, որովհետև մենք էլ մարդ ենք և ուզում ենք մարդավարի կեանք ունենալ»։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Փառք տուէք ուրեմն Աստուծուն, որ մինչև այսօր բերանիցս վատ խօսք չէք լսել և որ ես չարչարող և ծեծող վարպետներից չեմ եղել։

ԱՐՄԵՆԱԿ.—Բայց ծեծում են միմիայն անասունին, իսկ մարդը անասուն չէ։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ուրեմն՝ ձեր ասելով էլ այսուհետև աշակերտին ձեռք տալ չի՞ կարելի։

ԱՐՄԵՆԱԿ.—Ի հարկէ ոչ։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ո՞վ է սովորեցրել այդ բաները։

ԱՐՄԵՆԱԿ.—Ո՞վ պէտք է սովորեցնի...մենք կարդացել ենք։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Սուտ էք ասում, անպիտաններ, սա Արամի խօսքերն է։

ԱՐՄԵՆԱԿ.—Ի զուր էք նրան մեղադրում... հօ ամբողջ Եւրոպան Արամի ձեռքին չէ։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Զայնե՛րդ, անպիտաններ։ «Եւրոպա»։ Հը՛մ, դուք մոռանում էք, որ ես կը հեռացնեմ ձեզ ամենքիդ էլ։

ԱՐՄԵՆԱԿ.—Ինչպէս կամենաք։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ինչպէս կամենամ։ Դուք կարծում էք՝ ես կատակ եմ անում։ Ես ձեզ ասում եմ՝ կը հեռացնեմ ամենքիդ և ձեր տեղ նորերին կը վարձեմ։

ԱՐՄԵՆԱԿ.—Ոչ ոք չի գայ ձեզ մօտ։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ինչպէ՞ս։

ԱՐՄԵՆԱԿ.—Այնպէս... սա վճռուած բան է, ոչ ոք չի համարձակուի։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Իսկ եթէ ես նրանց ասեմ, որ ես քաղաքի մէջ ամենաառաջին կօշկակարներից մէկն եմ, և ցոյց տամ նրանց ահագին գործ։

ԱՐՄԵՆԱԿ.—Դուք ոչ մի գործ չէք ունենայ։ Մենք ձեր դէմ բոյկոտ կը յայտարարենք. այդ մասին կիմանայ ամբողջ քաղաքը, և ոչ ոք ձեզ մօտ պատուէր տալու չի գայ։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ուրեմն ամբողջ քաղաքն էլ ձեր ձեռքին է։

ԱՐՄԵՆԱԿ.—Այդպէս են ասում։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Շատ լաւ, տեսնենք։ Ինձ տուող Աստուածը առանց ձեզ էլ կը տայ։

ԱՐՄԵՆԱԿ.—Ապա ինչո՞ւ երբ գարնան սկզբին գործադուլ արինք՝ չտուաւ։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Զա՛յնդ, սրիկայ։



## ՏԵՍԻԼ 3.

**Յարութիւն, Արմենակ, Մարգար եւ այլն**

ՄԱՐԳԱՐ.—(Եկաւ խանութից)։ Խնամիդ եկել է և ուզում է քեզ հետ հաշտուել։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Քեզ ո՞վ ասաց, որ ես խնամի ունեմ։

ՄԱՐԳԱՐ.—Ինքն է ասում, Սահակ քեռին։ (Քիչ խմած է)։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Գլուխը քարով է տալիս։

ՄԱՐԳԱՐ.—Ասենք՝ այսօր թէկ իմ գլխուցս էլ մի առանձին խելք չի մնացել, բայց նա բոլորովին է իրան կորցրել...

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Աւելի լաւ է՝ խօսես քո մասին։ Որտե՞ղ էիր ամբողջ օրը։

ՄԱՐԳԱՐ.—Փորս էր ցաւում։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Սուտ ես ասում, Մարգար, մէկ մտածիր՝ ինչ օրինակ պէտք է լինես այդ երեխաների համար։

ՄԱՐԳԱՐ.—Ի՞նչ երեխաներ են։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Այո, ինչ էլ որ լինի, նրանք երեխաներ են. և վայ նրան, ով մոլորեցնում է նրանց։

ԱՐՄԵՆԱԿ.—Իսկի էլ մենք երեխաներ չենք։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ինչպէ՞ս. ուրեմն դուք ձեզ արդէն մե՞ծ էք համարում։

ՄԱՐԳԱՐ.—Դու նրանց հոգսը մի քաշիր, վարպետ։ Սրանք մեզ նման չեն։ Տեսնում ե՞ս, փորձիր մէկին խփել և կը տեսնես, որ ամենքն էլ տրտինգ տուին։ Զգոյշ։ Պատահած տեղը քացի էլ կը խփեն։ Տեսնում ե՞ս սրան։ (Արմենակին)։ Լեզուով մեզ նման քսանին ջուրը կը տանի և ծարաւ յետ կը բերի։ Կատակ բան չիմանաս «ցացիալ դեմկրատներ» են սրանք։ «Մէկը ամենքի և ամենքը մէկի համար»։ Է՛յ, աւազակներ. տես ունքերի տակից ինչպէս են նայում վրաս։ Ո՞ւհ, խոզի ճուտեր։ (Նրանք ծիծաղում են)։ Փուստ, անպիտաններ, ինչպէ՞ս էք համարձակվում (իրան) ձեր մեծի վրայ ծիծաղել։ Ասենք թէ ինչ եմ խօսում։ Սրանցում ոչ մեծ կայ, ոչ փոքր. սրանք ամենքն էլ «ընկերներ» են... հը՛մ, ինձ էլ են «ընկեր» կոչում։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Աւելի լաւ կանէիր այս դրութեան մէջ տուն գնայիր և պառկէիր, քան թէ թշերդ կարմրացրել ես այստեղ եկել։

ՄԱՐԳԱՐ.—Ինձ փող է հարկաւոր։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ա՜, փողի ես եկել. համեցէք, վաղուց եմ պատրաստել։ (Տալիս է տաս բուբլանոց)։ Երևելի մարդ ես։

Շաբաթի վեց օրը գործում ես, իսկ յեռոյ վազում թուղթ խաղալու, արբելու։

ՄԱՐԳԱՐ.—Ես արբած չեմ։ Ես կատարել եմ իմ քրիստոնէական պարտքս։ Ես գերեզմանատնից եմ գալիս։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ինչո՞ւ համար էիր գնացել։

ՄԱՐԳԱՐ.—Գնացել էի տեսնելու այն, ինչ որ այս կեանքում երբէք չենք տեսնելու։ Է՜յ, ընկերներ, լակոտներ, որ երբեմն քաղցր երգներով ինձ էլ էք խենթացնում, բոլորը սուտ է։ Ձեր ուզածը այնտեղ է։ Այնտեղ է հաւասարութիւն, եղբայրութիւն և յաւիտենական խաղաղութիւն։ Է՜հ, վարպետ, մի նեղանայ։ Կեանքը այստեղ այնքան տխուր է, այնքան միատեսակ, որ երբեմն սիրտս ուզում է տրաքուի։ Ամենայն օր միևնոյն կաշու անուշահոտութիւնը, միշտ միևնոյն սև ներկը, միշտ այդ հոտած խոզի մազը, այդ ապակու կտորները, սրանրա ոտքի տակ փռուելը։ Ի՞նչ թագցնեմ, վարպետ. առաւօտեանից սիրտս լքցուած, ականջս սրել, մեռելի զանգի էի սպասում, որ մէկ դուրս գամ այս քաղաքի աղմուկից, մէկ գերեզմանատուն գնամ։ Եւ ի՞նչ։ Հէնց որ մի բաժակ խմեցի, հէնց որ փորս մի քիչ տաքացաւ, պատիւս վկայ, սուտ-սուտ «Աստուած ողորմին» այնպէս սկսեցի բղաւել, որ կարծես մեռելաթաղ չէր այդ, այլ մի հարսանիք։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Բաւական է, էլ գլուխ չունեմ քո դատարկախօսութիւնը լսելու։

ՄԱՐԳԱՐ.—Ահա հէնց այդ խիստ բնութիւնդ է, որ ամենքին ոտքի է կանգնեցրել էէ։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Վա՜ռ եմ, չէ՞ք հաւանում։

ՄԱՐԳԱՐ.—Ապա ի՞նչ է։ Մօտդ ոչ խօսել կարելի է, ոչ ծխել և ոչ էլ երգել։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ապա դուք ի՞նչ էիք ուզում. որ դուք ինձ մօտ մինչև անգամ երգէիք, խօսէիք, և ծխէի՞ք էլ։ Ոչ, ես հին կարգը փոխողը չեմ։ Հաւեցէք. չէք հաւանում՝ դուրս այստեղից։

ՄԱՐԳԱՐ.—Է՜հ, դու էլ մարդ վախեցրիր. կարծես էլ ուրիշ տեղ չկայ։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Գնա, տեսնեմ ո՞վ է քեզ նման արբեցող բանուորին տեղ տալու։

ՄԱՐԳԱՐ.—Ես միայն այսօր եմ արբել, իսկ քո որդին ամեն օր։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Դուրս այստեղից ասում եմ, դուրս ամենքդ էլ։



ՄԱՐԳԱՐ.—Ուրեմն կապիր արհեստանոցիդ դռները։ (Գնաց խանութով)։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Այո, աւելի շուտ կը կապեմ, քաղցած կը մնամ, բայց ձեզպէսների օգնութեամբ գործ շարունակել, մի կտոր հաց աշխատել՝ էլ չեմ ուզում։ Դէ՛, աղօթեցէք և գնացէք։ Աղօթեցէք, գուցէ Աստուած ձեզ մի փոքր խիղճ տայ և ամօթ։ Աղօթեցէք։ Թէ՞ Աստուծուն էլ էք ուզում ուրանալ։ Ձեզնից ամեն բան կարելի է սպասել։ Գնացէք, որդի՛ք։ Սա կը լի՞նի վերջին երեկոն։ Այո, վերջին երեկոն։ Կը պոկեմ դռների վրայից մակագիրները և կը գցեմ ներս։ Գնացէք, ես ձեր առաջը չեմ կտրել։ Մի՛ նչչին շնորհակալութիւն էլ մի՛ ասէք, ոչ, հարկաւոր չէ։ Մի ամաչէք, սիրելիներ։ Ահա ես երեսս շրջում եմ մի կողմ և չեմ ուզում ձեզ ամաչեցնել։ Դէ գնացէք, Աստուած ձեզ հետ։ (Շրջեց երեսը մի կողմ)։

ԱՐՄԵՆԱԿ.—Ահա մեր պայմանները։ (Դրեց սեղանի վրայ)։ Մենք յայտարարում ենք գործադուլ։ (Գնաց խանութի դռնով. աշակերտներն էլ գոգնոցները հանելով սարան հետևեցին)։

## ՏԵՍԻԼ Դ.

### Յարութիւն և Սահակ

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—«Տուր ինձ ոյժ, որ կարողանամ դիմանալ»։

ՍԱՀԱԿ.—(Նկաւ խանութով մի կապոց ձեռին)։ Է՜յ, քիչ աղօթիր. ես էլ շատ աղօթեցի, ես էլ շատ երեսս գետնին քսեցի, բայց միևնոյնն է, չի օգնում։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ո՞վ է հարցնում քեզ՝ օգնում է թէ՞ ոչ։

ՍԱՀԱԿ.—Ա՜, տեսնում ես. եթէ օգնում է, ապա ո՞ւր է քո համբերութիւնդ։ Ինչո՞ւ ես մեղանչում, չէ՞ որ նոր աղօթեցիր։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Որտեղի՞ց ես ձեռք բերել այդ համարձակութիւնը... մի ժամանակ աչքդ գետնից չէիր բարձրացնում։

ՍԱՀԱԿ.—Իսկ քեզ դո՞ւր էր գալիս, որ ես միշտ խոնարհվում էի ամենքիդ առաջ։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ի՞նչ գործ ունես դու այստեղ։

ՍԱՀԱԿ.—Եկել եմ իմանամ՝ մի՞թէ մինչև հիմա էլ չի թեթևացել սրտիդ ցաւը։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Եթէ դրա համար ես նեղութիւն քաշել, ապա աւելորդ է. որովհետև ես իմ ցաւի ճարը կը գտնեմ. յոյս Աստուած, որ կը գտնեմ։

ՍԱՀԱԿ.—Ոչ, չես գտնի։ Ոչ դու, ոչ էլ ես։ Երբէք մենք մեր ցաւի ճարը չենք գտնի։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Դէհ, ուրեմն յոյս ունեմ՝ հասկանում ես, որ եթէ եկած չլինէիր ինձ մօտ այս ժամին՝ ինչ լեզուով պիտի խօսէի քեզ հետ։

ՍԱՀԱԿ.—Չլինի՞ թէ ուզում ես ինձ փախցնել։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ա՜խ, տէր Աստուած. և ի՞նչ զարմանալի բան կը լինէր։ Չէ, Աստուած վկայ, երևելի վարպետ մարդիկ էք։ Եթէ ճշմարիտ է, որ դու ժառացել ես քո պատուելի կնոջ և աղջկայ արարմունքը, ապա ես քեզ կը յիշեցնեմ։

ՍԱՀԱԿ.—Հարկաւոր չէ, եղբայր։ Մի նորոգի ցաւերս։ Բայց չէ՞ որ դու այն օրը եկար և հազար ու մէկ պակասութիւն ասացիր երեսիս։ Ի՞նչ իրաւունքով։ Մի՞թէ արդար բան է, անարգել մէկին, իսկ նրան իրաւունք չտալ, որ մէկ-երկու խօսք էլ նա ասի։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ինչի՞ մասին պիտի խօսես։

ՍԱՀԱԿ.—Նրա մասին, որ իմ աղջիկը երբէք վատ չի եղել։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ա՜խ, ի հարկէ չէ, ես տեսայ նրա շնորհքը... Հը՛մ, լաւացաւ նրա ատամը։

ՍԱՀԱԿ.—Երբէք նա ատամնացաւ չի ունեցել։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Եւ ոչ էլ ի հարկէ կոզքն է ցաւել։

ՍԱՀԱԿ.—Կեանքում հիւանդացած չկայ։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Զարմանալի է ուրեմն, որ այսքան ուշանում է Աստուծոյ արդարադատութիւնը։

ՍԱՀԱԿ.—Ի՞նչ արդարադատութեան մասին է խօսքդ։ Ահա տես, ես ծնողս առնում եմ 3 բուռ հող (անում է) և իմ ձեռքով ցանում նրա վրայ և թաղում։ Սրանից աւել ինչ ես ուզում ինձանից։ (Հացակնում է)։ Խօսում ես արդարադատութեան մասին, բայց ո՞ւր է նա. և եթէ նա կայ, ինչո՞ւ է թագաւորում անօրէնութիւնը։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ցնորուե՞լ ես դու։

ՍԱՀԱԿ.—Այո, այդ մասին ես այնքան եմ մտածել, որ վերջը ցնորուել եմ։ (Ցած)։ Ճշմարիտ ասում եմ քեզ. եթէ իմ տան մէջ չլինէր սարսափելի կարիքը, չէր լինի և այս բանը. բայց որպէսզի այդ բանը չլինէր, ես կաշուիցս էի դուրս գալիս. բայց ի՞նչ անես, եղբայր, չեղաւ, չեղաւ, չեղաւ։ Եւ հիմա էլ ահա պակասը լրացաւ։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ի՞նչ կապոց է այդ։

ՍԱՀԱԿ.—Հաւատարիմ ծառայութեանս օժիտը։ Թքեցին



սպիտակած մազերիս, խփեցին ծոծրակիս և ասացին. «Պառաւած շուն, ո՞ւմ աչքերն ես ուզում կապել... ձևանալով որ ոչինչ չգիտես... Դուրս այստեղից. գնա՛ ընտանիքիդ համար ցածութիւն արա՛»։ Դէ, գնա՛ հիմա դու արդարադատութիւնից խօսիր։ Բայց ինչ էլ որ լինի, մեղքը միշտ մեղք է, և արդարացումն չկայ։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ուրեմն եթէ դու պատիւ հասկացող մարդ ես, գնա պատժիր նրանց։ Ասում են՝ նրանք նոր ընակարան են վարձել։

ՍԱՀԱԿ.—Այո։ Ես ուզում էի փախչել այս քաղաքից, բայց ոչ. հեռու ինձնից թուլութիւնը. էլ բաժակը լցուել է, պէտք է հաշիւ պահանջեմ նրանցից։ Ես ցոյց կը տամ նրանց, թէ ինչ է նշանակում առանց իմ հրամանի նոր ընակարան վարձելը։ Ես կը բռնեմ նրանց երկուսի մազերից էլ, քաշ կը տամ նրանց յատակի վրայ և ոտքով այնքան կը կոխկռտեմ, որ շան նման սատակեն։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Դու ասում էիր՝ աղջիկդ անմեղ է։

ՍԱՀԱԿ.—Այո, նա անմեղ է. մեղաւորը հին կախարդն է. ահա թէ ո՞ւմ պէտք է բռնել. ահա թէ ինչպէս պիտք է սեղմել նրա մէջքը պատին և ոտքով այնքան խփել փորին՝ մինչև որ աչքերը դուրս գան և փորոտիքը թափուեն։ Կամ թէ կը քցեմ նրանց մի սենեակ, կը կողպեմ դռները և կը սատկեմ նրանց քաղցած մնալ. իսկ եթէ նրանք աղմուկ բարձրացրին, հաց աղաղակեցին, սարսափելի բան կանեմ. կրակ կը տամ, կայրեմ ամբողջ տունը և ինձ էլ հետը։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Լաւ, լաւ. գնա՛ այստեղից, ես գործ ունեմ։

ՍԱՀԱԿ.—(Դնալով)։ Մի քայլ անգամ չես կարող անել փողոցում. մէկ էլ տեսնես՝ կանգնեցրին, մատով ցոյց տուին ինձ և սկսեցին ծիծաղել։ Մի՞թէ ընկած մարդուն պէտք է ծաղրել։ Տէր Աստուած, ո՞վ է մտել և քրքրել (սիրտը ցոյց տալով) այստեղս, որ իմանայ, թէ ինչե՞ր եմ տարել։ Հեշտ է ծաղրելը և անարգելը. ապա մէկ փորձեցէք տանելն էլ .. Իսկ ես տարել եմ, եղբայր, տարե՞լ եմ (լալով)...

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—(Տանելով նրան)։ Տեսնում եմ, եղբայր, տեսնում եմ... (Վերցնում է պայմանները։ Գնացին խանութի ներսը)։

## ՏԵՍԻԼ 5.

### Արամ եւ Օվանէս

ՕՎԱՆԷՍ.—(Մտաւ աջ կողմի դռնից եւ դէպի ներս մօրը)։ Օ՛խ, ես քեզ ասում եմ, մի լաց լինի... Ես չեմ կարողանում տանել արտասուքներդ։ Արտասուք թափելով աշխարհին չես յաղթի։ Բաւական է։

ԱՐԱՄ.—(Պիջակը ուսերին, կապոյտ բլուզով, մի բրօշիւր կարդալով, լայնեզր սեւ գլխարկով, երկար կօշիկներով մտաւ ձախից եւ լսեց վերջին խօսքերը)։ Կեցցէ Օվանէս, լաւ ես ասում, աշխարհի հայրը արտասուքով չեն անիծի։

ՕՎԱՆԷՍ.—Է՜հ, Արամ, մի՞թէ ես հասկանում եմ, թէ ինչ եմ խօսում։

ԱՐԱՄ.—Այդպէ՞ս։ Իսկ ես կարծում էի, որ դու լաւ մտածել ես, յետոյ ես ասում։

ՕՎԱՆԷՍ.—Ի՞նչ մտածել։

ԱՐԱՄ.—Այսինքն՝ հեռու լալկանութիւնը, գլխիկոր ընկճուելը, մի խօսքով՝ ստրուկին յատուկ խոնարհութիւնը։ Պէտք է այն, ինչ որ վաղուց է պակասում քեզ, մի փոքր կամքի ոյժ, մի փոքր էլ համարձակութիւն, որ կարողանաս թափ տալ վրայիցդ այդ կօշմարը։ Իսկ յետոյ, Օվանէս, որ գլխաւորն է, հաստատուն հաւատ։ Չէ՞ որ ախր այդպէս չի կարելի, սիրելիս։

ՕՎԱՆԷՍ.—Էլ ի՞նչ հաւատի մասին է խօսքդ։

ԱՐԱՄ.—Մոռացի՞լ ես, Օվանէս։ Հաւատն, որ մենք պէտք է յաղթենք, մեր ջանքերը այսքան զոհաբերութիւններից յետոյ՝ պէտք է պսակուի աջողութեամբ։

ՕՎԱՆԷՍ.—Երանի քեզ, որ այդ բաներով ես ոգեւորվում։

ԱՐԱՄ.—Ա՜խ, պէտք է զարթնել, Օվանէս, բաւական է ինչքան քուն եղանք։

ՕՎԱՆԷՍ.—Քեզ համար, ի հարկէ, հեշտ է այդպիսի բաների մասին խօսելը և մտածելը, բայց արի մէկ իմ սրտին էլ հարցրու, տես նա ինչ է ասում։

ԱՐԱՄ.—Է՜հ, եղբայր, մի՞թէ դու դեռ մոռացութեան չես տուել... բաւական է, ի սէր Աստուծոյ, մէկ հեռու քշիր քեզանից այդ փոքրոգութիւնը։ Դու հօ երեխայ չես, սիրելիս։

ՕՎԱՆԷՍ.—Իմ դրութեան մէջ երբէք գլուխդ ուրիշ մրաքեր չէին մտնի։

ԱՐԱՄ.—Այդպէ՞ս ես ճանաչել ինձ։



ՕՎԱՆԷՍ.—Թոյլ է ուրեմն քո սէրը, և սուտ է՝ որ դու սիրահարուած ես։

ԱՐԱՄ.—Գուցէ.... բայց և այնպէս՝ ես կասեմ, որ, հաւատացնում եմ, ինքս երբէք թոյլ չէի տայ, որպէսզի մարդ իր ամբողջ էութիւնը զերի դարձնի ինչ-որ հիւանդոտ զգացմունքների։

ՕՎԱՆԷՍ.—Ահա նոյնն են ասում և նրանք։ Ես ամեն օր միևնոյնն եմ լսում, բայց չեմ կարողանում։ Սիրտս նման է լցուած ռումբի. նա ամեն մի լոգէ պատրաստ է մի փոքրիկ շարժումից պայթել։ Ես հազիւ եմ կարողանում զսպել ինձ։ Կատաղած գայլի նման՝ ես պատրաստ եմ առաջին պատահողի վրայ յարձակուել... երևի շուտով ես մարդ կը սպանեմ, կամ սեղի շուտով ես կը սպանեմ ինքս ինձ։

ԱՐԱՄ.—Ինչո՞ւ չէ... Լսիր։ Երբ առաջին անգամ ես տեսայ ֆոնոգրաֆը՝ ասացի. կեանքս կը տայի էդիսոնին, եթէ այդ հնարաւոր լինէր. սա ես հասկանում եմ։ Ինչ վերաբերում է քո միւս մտքին, ես կասեմ՝ թող այդ բանը։ Ի՞նչ օգուտ այդ անմիտ սպանութիւններից. քաղցածը քաղցածի արիւնն է թափում, ստրուկը ստրուկի ոսկորը կրծում։ Եւ այդ բոլորը ինչո՞ւ, եթէ ոչ մի կաթ չոր հացի համար։ Քա՛ջ ես, տղամա՛րդ ես. համեցէ՛ք, կռուի ուրիշ ասպարէզ կայ։ Այնտեղ, եղբայր, քո անձնական վիշտն էլ կը ժոռանաս։ Մի՞թէ դու աչքերդ կապած ես մտնում գալիս և մի՞թէ չգիտես, թէ շուրջդ ինչե՞ր են կատարվում։ (Թորնրդաւոր)։ Բանը մարմնացել է, և փոթորիկ դարձած համակել է ամբողջ աշխարհը. իսկ դու մի անմեղ արիւն թափելու համար ես մտածում։

ՕՎԱՆԷՍ.—Անմե՞ղ ես կոչում նրան. ուրեմն չուզե՞ս իրաւունք պատժելու նրան։

ԱՐԱՄ.—Երբէ՛ք։

ՕՎԱՆԷՍ.—Ինչո՞ւ համար։

ԱՐԱՄ.—Որովհետև դու նրան չէիր կարող պահել, ինչպէս նա կուզէր։ Ահա գաղտնիքը։

ՕՎԱՆԷՍ.—Ապա մեր այս ուժեղ ձեռքերը։

ԱՐԱՄ.—Բայց ի՞նչպէս է գնահատվում մեր «այդ ուժեղ» ձեռքերի գործը։ Սրա համար էլ ասում եմ քեզ, Օվանէս, հազարաւոր մեղպէսների հարցը վճռուած կը լինի այն ժամանակ, երբ մենք յաղթող կը հանդիսանանք։ Մէկ աչքդ բաց և տես ինչե՞ր են կատարվում։ Ահա՛ առ, կարդա։ (Դրպանից հանում է ծածուկ մի բուռդ)։ Հիմա ամենքը ոտքի են կանգնել և իրաւունք են պահանջում։ Ի՞նչ զանազանութիւն կայ քեզ նման մի

գործակատարի և ինձ նման մի գործարանական բանուորի մէջ։ Ինչո՞ւ մենք էլ ձեռք ձեռքի չտանք, ինչո՞ւ մենք էլ չմիանանք, կռուի դաշտ դուրս գանք և պաշտպաննենք մեր դատը։

### ՏԵՍԻԼ 6.

**Սրամ, Օվանէս, Յարութիւն**

ԱՐԱՄ.—Ծերունին գալիս է, Օվանէս. դու գիտես, որ նա ինձ հետ չունի... Ես գնում եմ։ (Խորհրդաւոր)։ Վաղը սկսվում է։ (Ուզում է գնալ)։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Է՛յ, սպասիր։ (Գալիս է խանութից)։ Կարդա տեսնեմ այստեղ ի՞նչ է գրուած։ «Պայմաններ 16 կէտից բաղկացած»։ Հը՛մ, արդեօք չափազանց չե՞ն այդ լակոտների պահանջները։

ԱՐԱՄ.—Ե՞ս ինչ կարդամ, հօրեղբայր։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Սրիկայ։ Բաւական չէ (թղթին խփելով), այն անպիտաններին խելքից հանել ես, հիմա էլ սրանն ես ուզում գժուացնել։

ԱՐԱՄ.—Հօրեղբայր, մի անգամ էլ կրկնում եմ, որ սա տնտեսական անագին խնդիր է։ Դու բոլորովին ի զուր ես ինձ վրայ բարկանում։ Մեզպէսների շնորհիւ, այո, քիչ նմանների մանր մունր այս ողորմելի արհեստանոցները կը կործանուեն, բայց այդ կործանուածներից փշրանքներից կը կանգնեն հսկայական մեծութեան գործարաններ, և այդ աշխատանքի տաճարների մէջ մենք այլևս չենք տառապի այնպէս, ինչպէս քեզ նմանները իրանց բոլոր կեանքում։ Այնտեղ կը վերանայ վաղուայ քաղցած մնալու հոգսը։ Այնտեղ կը լինի տնտեսապէս ապահովուած ցանկալի եղբայրութիւնը։ Իմ սիրտը քեզ համար ցաւում է, բայց ի՞նչ անել, հնար չկայ։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ուրեմն իմ արհեստանոցը պէտք է կործանուի։ Եւ դու կասես, որ մտածում ես ինձ համար։

ԱՐԱՄ.—Ես մտածում եմ որդիների ապագայի և նրանց բախտաւորութեան մասին. իսկ հայրերը, եթէ նրանք խելք ունենան, պէտք է շնորհակալ լինեն մեզանից։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ես քեզ ցոյց կը տամ, թէ ինչպէս է լինում շնորհակալութիւնը։ (Ուզում է յարձակուել)։

ՕՎԱՆԷՍ.—(Բռնում է նրան)։ Սպասիր, ի՞նչ ես խանգարում նրան։

ԱՐԱՄ.—Վաղը առաւօտեան ժամը 10-ին, քաղաքի 4 կէտերից. պատրաստ եղիր, Օվանէս։ (Գնաց ձախ)։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Սպասիր, շան ծնունդ։



### ՏԵՍԻԼ 7

**Օվանէս եւ Յարութիւն**

ՕՎԱՆԷՍ.—Ի՞նչ ես ձայնդ գլուխդ գցում։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Դու չե՞ս լսում՝ նա ինչի՞ր է խօսում։

ՕՎԱՆԷՍ.—Քեզ ի՞նչ. ի՞նչ էք ամեն քայլափոխում հետևում մարդուն։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Ուրեմն դու հաւանութիւն ես տալիս նրա ասածին։

ՕՎԱՆԷՍ.—Այո՛, ես միանում եմ նրանց հետ և չեմ ուզում լսել քեզ։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Դու ինձ չես ուզում լսե՞լ։

ՕՎԱՆԷՍ.—Այո՛, չեմ ուզում ոչ լսել և ոչ էլ խօսել։ (Ընստում է գլխիկոր)։

ՅԱՐՈՒԹԻՒՆ.—Եւ ոչ իսկ խօսե՞լ... Վնաս չունի, որդիս։ Մի բարկանայ։ Ես քեզ այլևս գլխացաւանք չեմ տայ։ Քանի որ բանը այդպէս դառաւ, ահա։ (Պատռեց թուղթը եւ ցրեց)։ Սրա հետ թող ոչնչանայ իմ գործս էլ... Սա կը լինի վերջին երեկոն... Կը հաւաքեմ եղած-չեղածս, վաղը կը տանեմ կիրակնօրեայ շուկայ և այնտեղ կը ծախծխեմ։ Յետոյ ամեն բան կուտենք կը վերջացնե՛ք, յետոյ էլ կը բռնեմ քո մօր ձեռքից՝ դռնէ-դուռ կընկնեմ և.... ողորմութիւն կը հաւաքեմ...։ Ա՞յդ էիր ուզում...։ Սա կը լինի քեզ հետ իմ վերջին խօսքը։ Ասուած քեզ հետ։ (Աչքերը բռնած գնաց արհեստանոց)։

### ՏԵՍԻԼ 8

**Օվանէս եւ Դասպար**

ԴԱՍՊԱՐ.—(Եկաւ ձախ կողմից, մօտեցաւ Օվանէսին)։ Բարի երեկոյ, Օվանէս։

ՕՎԱՆԷՍ.—(Ուշքի գալով պոռնգվում է եւ նորից զսպում իրան)։ Դասպար, ինչո՞ւ ես եկել։

ԴԱՍՊԱՐ.—Հէնց այնպէս, սիրտս ուզեց քեզ, և եկայ։

ՕՎԱՆԷՍ.—Դու համարձակվում ես դեռ ծաղրե՞լ ինձ. դու չե՞ս իմանում՝ ինչ կարող է պատահել։

ԴԱՍՊԱՐ.—Կարող է պատահել, որ դանակը կը դնես այստեղիս (փորին) և կը խրես ներս։

ՕՎԱՆԷՍ.—Եւ դու կասես, որ սա կը լինի անարդարութիւն։

ԳԱՍՊԱՐ.—Ոչ. սա կը լինի բարկութեան թափի մէջ սպանութիւն գործել և յետոյ խոկոյն...

ՕՎԱՆԷՍ.—Ի՞նչ։

ԳԱՍՊԱՐ.—Յետոյ խոկոյն զղջումն՝ անմեղ արիւն թափելուդ համար։ Լսիր, Օվանէս։ Ի՞նչ հարկաւոր է տաքանալ։ Խօսենք հանգիստ սրտով, իսկ երբ կը գայ տաքանալու տեղը, ես ինքս քեզ կը յիշեցնեմ։

ՕՎԱՆԷՍ.—Ի՞նչ պիտի ասես. էլ ասելու տեղ թողի՞լ ես։

ԳԱՍՊԱՐ.—Լսիր ինձ։ Ես չեմ երկարացնելու, որովհետև իմ սիրտն էլ է լցուած... գուցէ և քոնից ոչ պակաս։ Վերջին ժամանակներս դու ինձնից ի զուր ես երես դարձրել։ Թող ես լինեմ սրիկայի և անպիտանի մէկը, բայց խոստովանուիր՝ վատ ընկեր չեմ եղել։

ՕՎԱՆԷՍ.—Ի՞նչ խօսք... տեղը եկաւ, և ես տեսայ քո ազնուութիւնը և հիացայ։

ԳԱՍՊԱՐ.—Ոչ, դու իմ ազնուութիւնը չտեսար, բայց տեսնում եմ՝ ժամանակ է, որ իմանաս, թէ ինչեր է կատարուել այստեղ։ (Սրտում),

ՕՎԱՆԷՍ.—Ինչ՞ը։

ԳԱՍՊԱՐ.—(Սաստիկ զգացուած)։ Պահապան հրեշտակի նման միշտ կանգնած եմ եղել նրա դռան։

ՕՎԱՆԷՍ.—Ո՞ւմ...

ԳԱՍՊԱՐ.—Նրա, Շուշանիկի։ Յիշում ե՞ս իմ խօսքերը, երբ ես առողջացայ, կամ երբ դու ինձ ոտքի կանգնեցրիր։

ՕՎԱՆԷՍ.—Սովորական խօսքեր... Դու ասացիր՝ «Ես ոչինչ չունեմ, քո ազատած կեանքը քեզ է պատկանում, հրամայիր ինչ կուզես, և ես պատրաստ եմ»։

ԳԱՍՊԱՐ.—Եւ ահա ես եկել եմ և ասում եմ՝ ես պատրաստ եմ։

ՕՎԱՆԷՍ.—Ես ոչինչ չեմ հասկանում։

ԳԱՍՊԱՐ.—Յիշում ե՞ս, Օվանէս, ինչպէս էր ձեռներս քոր գալիս, երբ մի ընտանիքում տեսնում էինք բացարձակ անառակութիւն։ Ա՜հ, ես սրանց հերն եմ անիծել։

ՕՎԱՆԷՍ.—Մթթէ դու կամենում ես ասել, որ այդ այդպէս է։

ԳԱՍՊԱՐ.—Ապա էլ ի՞նչ։

ՕՎԱՆԷՍ.—Ուրեմն նրա մօր խօսքը, թէ դու ես ասել։

ԳԱՍՊԱՐ.—Կար ժամանակ, որ այդպէս չէր համարձակուի այդ ցած արարածը։



ՕՎԱՆԷՍ.—Դու էլ ես աչքիս լաւ երևալու համար յիշոց տալիս նրան։

ԳԱՍՊԱՐ.—Ոչ, այդպէս բան չկայ։ (Պառզա)։ Քեզնից առաջ գեղեցիկ Շուշանիկին ես եմ սիրել։

ՕՎԱՆԷՍ.—Ինչո՞ւ ինձ չէիր նախազգուշացնում։

ԳԱՍՊԱՐ.—Զգիտեմ։ Երբ մէջտեղ ընկաւ քո անունը, ես լռեցի։

ՕՎԱՆԷՍ.—Յետոյ։

ԳԱՍՊԱՐ.—Ես ուրախացայ անկեղծ սրտով և կարծեցի, թէ կատարուեց հատուցումը իմ երախտագիտութեան։ Ես անհամբեր սպասում էի այն օրին, երբ պիտի տեսնէի քո երջանկութիւնը։ Կեանքումս ոչ տանը և ոչ դրսում ինձ համար ցաւող սիրտ չեմ տեսել... միմիայն դու... Ես կարծում էի մի անգամից ձեռք եմ բերել մի եղբայր... և, այո՛, և մի քոյր... թէ՛ չունէի թաղելու համար։ Ես ամեն օր շտապեցնում էի մօրը, որ շուտ տեսնեմ քո ուրախութիւնը։

ՕՎԱՆԷՍ.—Ինչի՞ համար։

ԳԱՍՊԱՐ.—Վախենում էի՝ չլինի թէ ուրիշ փախցնեն, որովհետև վտանգաւոր որսորդներով էր շրջապատուած թռչունդ։

ՕՎԱՆԷՍ.—Յետոյ։

ԳԱՍՊԱՐ.—Մի անգամ... ոչ... հէնց նոյն գիշերը ես բռնեցի...

ՕՎԱՆԷՍ.—Բռնեցի՞ր, ասում ես։

ԳԱՍՊԱՐ.—Այո, ինչպէս գողին, գողութեան տեղում, գողացածը ձեռին։

ՕՎԱՆԷՍ.—Ես չեմ կարող հաւատալ։

ԳԱՍՊԱՐ.—Հրամայում ես ուրեմն, որ պատռե՞մ սիրտս։ (Երկու ձեռքով բռնում է կուրծքը)։

ՕՎԱՆԷՍ.—Ինչպէ՞ս տեսար։

ԳԱՍՊԱՐ.—Մի սենեակում։

ՕՎԱՆԷՍ.—Նրա՞ն՝ ասում ես։

ԳԱՍՊԱՐ.—Ապա էլ ո՞ւմ։

ՕՎԱՆԷՍ.—Իսկ որտե՞ղ էր մայրը։

ԳԱՍՊԱՐ.—Դժոխքի յատակում, ես ինչ գիտեմ. նա յետոյ եկաւ։

ՕՎԱՆԷՍ.—Եւ ի՞նչ։

ԳԱՍՊԱՐ.—Արիւնը տուաւ գլխիս, և ես հնարեցի այն, ինչ որ մայրը քեզ ասաց։

ՕՎԱՆԷՍ.—Բաւական է... ես այլևս ոչինչ չեմ ուզում լսել։

ԳԱՍՊԱՐ.—Ճշմարիտ։ Իսկ ես եկել եմ՝ քեզ նրանց մոտ հիւր տանելու։ Ես արդէն պատրաստել եմ նրանց։

ՕՎԱՆԷՍ.—Որ գամ և ամեն ինչ տեսնեմ իմ աչքովի։ Ոչ։ Այդ սարսափելի է. ես այդ չեմ կարող։

ԳԱՍՊԱՐ.—Հասկացիր միտքս։ Նրանք քեզնից վախենալով կարող են ոչնչացնել տալ քեզ... Նրանցից ամեն բան սպասելի է։

ՕՎԱՆԷՍ.—Ինչպէս կուզեն... ես արդէն կործանուած եմ...

ԳԱՍՊԱՐ.—Կնիկ մի լինիր... հասկացիր միտքս։

ՕՎԱՆԷՍ.—Էլ ի՞նչ միտք։ (Զարթնածի պէս)։

ԳԱՍՊԱՐ.—Եթէ ես իմանայի, որ դու կը համբուրէիր իմ ճակատը, ես ամեն բան իմ ձեռքով վաղուց արած վերջացրած կը լինէի։

ՕՎԱՆԷՍ.—Ինչո՞ւ չարիր։

ԳԱՍՊԱՐ.—Եթէ թոյլ ես տալիս, ուրեմն վճռուած է։

ՕՎԱՆԷՍ.—Ո՛չ, սպասիր։

ԳԱՍՊԱՐ.—Համեցէք։

ՕՎԱՆԷՍ.—Բայց ես չեմ կամենում անարդար լինել... ուրեմն նախ դատաստան և յետոյ վճիռ։

ԳԱՍՊԱՐ.—Շատ լաւ, դու կը լինես դատաւոր, իսկ ես վկայ։ Եւ եթէ դու ինձ չես հաւատում, համեցէք մնացած դատաստանն էլ արա իր տեղում։

ՕՎԱՆԷՍ.—Հիանալի է. այնտեղ, որտեղ կատարուել է ոճիրը։

ԳԱՍՊԱՐ.—Հիմա տեսնում եմ, որ դու տղամարդ ես։

ՕՎԱՆԷՍ.—Ոչ, դեռ մի ասի այդպէս... մի շտապիր...։ Յետոյ... յետոյ...։

ԳԱՍՊԱՐ.—Շատ լաւ, թող լինի յետոյ։

ՕՎԱՆԷՍ.—Բայց չէ՞ որ նա մի անմեղ... անփորձ աղջիկ էր... Մթթէ արդարութիւն կը լինի թողնել մօրը և պատժել նրան։

ԳԱՍՊԱՐ.—Մայրը պէտք է ապրի։

ՕՎԱՆԷՍ.—Ապրի՞։

ԳԱՍՊԱՐ.—Այո, ապրի և տանջուի։

ՕՎԱՆԷՍ.—Այդ հիանալի ես ասում։ Իսկ այն պարոնը։

ԳԱՍՊԱՐ.—Նրանում մեղք չկայ, թէ չէ՝ Գասպարը վաղուց նրան մորթած կը լինէր՝ ինչպէս մի հաւի։

ՕՎԱՆԷՍ.—Այդ ճշմարիտ է։

ԳԱՍՊԱՐ.—Ուրեմն դու կը գա՞ս։

ՕՎԱՆԷՍ.—Կը գամ։



ԳԱՍՊԱՐ.—Խանութիս դուռը կիսաբաց, ճրագս հանգցրած՝ քեզ կը սպասեմ։ (Գնաց որտեղով որ եկել էր)։

ՕՎԱՆԷՍ.—(Պառկում է սեղանի վրայից մի դանակ)։ Մի ճուտ սպանելու համար այդ էլ բաւական է։ (Օձիքը վեր քաշեց, վազեց փողոց)։

ՎԱՐԱԳՈՑ

---

## ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ

*Բեմը ներկայացնում է ընդարձակ սեղանատան։ Ձախ պատի տակ տախտ բարձերով և այլն։ Մէջտեղի պատի վրայ 2 լայն դռներ, որոնցից ձախակողմեանը բաց անելիս երևում են սեղանի շուրջը նստած թուրք խաղացողներ, սենեակը լաւ լուսաւորուած։ Աջ կողմինը բաց անելիս, երևում է մահճակալ, պերճ գոյներով պատին գորգ։ առաստաղից կախուած է կարմիր գոյնի լուսամփոփով լամպ։ Աջ պատի վրայ 3 դուռ. առաջինը տանում է դուրս, երկրորդը՝ խոհանոց, երրորդը՝ Սահակի ննջարան։ Առանձին շքեղութիւն չկայ, բայց նախկին անշքութիւնից էլ ոչինչ։ Սենեակի մէջտեղում ընթրիքի սեղան զանազան խմիչքների շիշերով և այլն։ Առաջի դռան մօտ սեղան՝ գրելխարկեր դնելու համար։*

### ՏԵՍԻԼ 1

**Սահակ եւ Գայիանէ** (*Աւելի լաւ հագնուած*)

ԳԱՅԻԱՆԷ.– (*Սահակին, որ սեղանի ծայրին նստած է նուագ*)։ *Տեսնում ես, եթէ լեզուիդ տիրութիւն անես, միշտ քեզ լաւ կը պահենք։*

ՍԱՀԱԿ.—*Դուք պարտաւոր էք այդ անելու. ես ձեզ քիչ չեմ պահել։*

ԳԱՅԻԱՆԷ.—*Ո՞վ է հակառակում. դրա համար էլ քեզ լաւ ուտեցնում ենք և խմեցնում. և շուտով, երբ լաւանաս, Շուշանիկը քեզ համար շորեր էլ կը գնի։*

ՍԱՀԱԿ.—*Ո՞ւր է նա։*

ԳԱՅԻԱՆԷ.—*Ի՞նչ ես անում նրան... Նա գործ ունի։*

ՍԱՀԱԿ.—*Ի՞նչ գործ, կանչիր նրան ինձ մօտ։*

ԳԱՅԻԱՆԷ.—*Տէր Աստուած, ինչի՞դ է հարկաւոր։ Հաց ես ուզում՝ կեր, գնա պառկիր էլի. ի՞նչ ես խանգարում ուրիշներին։*

ՍԱՀԱԿ.—*Կանչիր նրան այստեղ։ Ե՞ս եմ այս տան մեծը թէ ո՞վ։*

ԳԱՅԻԱՆԷ.—*Բայց չիմանամ, թէ ինչ ես ուզում։*



ՍԱՀԱԿ.—*Ես ձեզնից հաշիւ պէտք է պահանջեմ։* (*Գլուխը դրեց սեղանին*)։

ԳԱՅԻԱՆԷ.—*Լաւ, լաւ. գլուխներս մի տանի, կանչում ենք։* (*Բացում է խաղասենեակի դուռը, որտեղ կատարվում է հետեւեալը*)։

ԳՐԻԳՈՐ.—(*Բռնած է թղթերի կոլոզը*)։

ԳԱՍՊԱՐ.—(*Վերցնում է նրա ձեռքից մի թուղթ եւ միացնելով ձեռքի մեջ եղածի հետ՝ նայում նրան ճրագի դիմաց*)։

ԳԱՅԻԱՆԷ.—*Շուշան, այստեղ եկ։*

### ՏԵՍԻԼ 2

**Գայիանէ, Սահակ եւ Շուշանիկ**

ՇՈՒՇԱՆ.—(*Մտաւ խաղասենեակից շքեղ հագնուած, բերանին ծխախոտ, ձեռքերին փողեր, խաղասենեակի դուռը ծածկեց*)։ *Ստացիր կարտիդ փողերը։ Ինչո՞ւ կանչեցիր։ Ինչպէս թուղթը լաւ բերում էր։*

ԳԱՅԻԱՆԷ.—(*Ստանալով եւ մարդուց ծածուկ համբերով փողերը*) *1, 2, 3.* (*Շուշանին*)։ *Տես ի՞նչ է ասում։* (*Շարունակելով հաշուել*)։ *4, 5, 6.*

ՇՈՒՇԱՆ.—(*Ծխախոտը գցում է գետնին եւ կոխ տալիս*)։ *Ա՜խ, հայրիկ, այդ ինչո՞ւ ես տեղիցդ վեր կացել։*

ԳԱՅԻԱՆԷ.—*Հաշիւ է պահանջում։* (*Դնում է փողերը գրպանը*)։

ՇՈՒՇԱՆ.—*Ի՞նչպէս ես. տաքութիւնդ անցա՞։*

ՍԱՀԱԿ.—*Ես ինձ լաւ եմ զգում։*

ՇՈՒՇԱՆ.—*Սենեակդ ցուրտ չէ՞։*

ՍԱՀԱԿ.—*Լաւ է, որդի, խոհանոցից միշտ տաք է գալիս։*

ՇՈՒՇԱՆ.—*Իսկ անկողինդ փափո՞ւկ է։*

ՍԱՀԱԿ.—*Ես փշերի վրայ էլ ինձ հանգիստ կը զգամ, միայն թէ այստեղս* (*սիրտը ցոյց տալով*) *հանգիստ լինի։*

ՇՈՒՇԱՆ.—*Հոգս մի անի, հայրիկ, ամեն բան լաւ կը գնայ։ Հաց կերե՞լ ես։*

ՍԱՀԱԿ.—*Ոչ։*

ՇՈՒՇԱՆ.—*Դէհ շուտ արա կեր։*

ՍԱՀԱԿ.—*Շտապում ե՞ս երևի։*

ՇՈՒՇԱՆ.—*Ոչ, ես հէնց այնպէս եմ ասում։*

ՍԱՀԱԿ.—*Երեկ մայր և աղջիկ խոստացաք ինձ հաշիւ տալ։*

ՇՈՒՇԱՆ.—*Ա՜խ, դու դեռ չե՞ս մոռացել։*

ԳԱՑԻԱՆԷ.—(Կողմ)։ Ինչ կը մոռանայ։ (Մարդուն)։ Հօ տեսնում ես, որ արձակ ժամանակ չունենք։

ՍԱՀԱԿ.—Ես քեզ չեմ հարցնում։

ՇՈՒՇԱՆ.—Լաւ, վաղը առաւօտ մենք քեզ հաշիւ կը տանք։

ՍԱՀԱԿ.—Թէ չէ՝ նա միշտ ծռում է խօսքը և հարցիս ուղիղ չէ պատասխանում։

ԳԱՑԻԱՆԷ.—Ի՞նչ ես հարցնում, որ ինչ պատասխանենք։

ՍԱՀԱԿ.—Ես հարցնում եմ՝ ոսկով լի կարաս էք գտել, որ ուզում էք աշխարհ զարմացնել. գուցէ ուզում էք կարծեն, որ ես այնտեղ գողութիւնով եմ եղել պարապելիս, թէ ծերութեանս միջոցին կամենում էք ինձ պարտքի տակ քցել։

ԳԱՑԻԱՆԷ.—Ձեռք վերցրու մեզնից. բաւական է ինչքան դատարկ դատարկ խօսեցիր։

ՍԱՀԱԿ.—Ի՞նձ ես ասում այդպէս։ (Ուզում է վեր կենալ)։

ՇՈՒՇԱՆ.—(Ձսպելով նստեցնում է նրան)։ Դու նրա վրայ մի բարկանայ, հայրիկ. նա միշտ ասում է՝ «պէտք է աշխատենք հայրիկիդ բեռը թեթևացնել, թէ չէ՝ ծերացել է խեղճը, ոյժից ընկել է»։

ՍԱՀԱԿ.—Թող հազար անգամ իմ բեռը ծանր լինի, ես կը տանեմ, միայն թէ ոչ ոք չհամարձակուի քո անունիդ կպչելու։

ԳԱՑԻԱՆԷ.—Ո՞վ կը համարձակուի նրա մաղին կպչելու. թող նա մէկ դայ ինձ հետ խօսի, ես կիմանամ, թէ ինչ կը կը պատասխանեմ այդպիսներին։

ՍԱՀԱԿ.—Ես էլ թքեցի կամուրջի գործակատարի երեսին։

ՇՈՒՇԱՆ.—Եւ շատ լաւ էլ արել ես։ Տղամարդը քաջ պէտք է լինի։ Ա՜յ այդ մէկը ինձ դուր եկաւ։

ՍԱՀԱԿ.—Լաւ եմ արել։

ՇՈՒՇԱՆ.—Շատ լաւ. թէ չէ՝ մինչև ե՞րբ պէտք է թոյլ տանք, որ վրաներիս հաջեն։

ՍԱՀԱԿ.—Անպիտանները այսքան էին բացում բերանները։

ՇՈՒՇԱՆ.—Հը՛ա. շներ։ Կարելի է՝ քաղցած ես, հայրիկ։

ՍԱՀԱԿ.—Այո, կարելի է ասել՝ շատ քաղցած եմ։

ՇՈՒՇԱՆ.—Ապա ինչո՞ւ չես ուտում. մի՞թէ այդ բոլորը քեզ համար չէ. կեր։

ԳԱՑԻԱՆԷ.—(Ծածուկ)։ Խմացրու նրան։

ՇՈՒՇԱՆ.—Այ, ես քեզ մի քիչ կը խմացնեմ, որ կաղդուրուես։

ՍԱՀԱԿ.—(Ուտում է)։ Իսկ յետոյ էլ հաշիւ կը տաք ինձ։

ԳԱՑԻԱՆԷ.—(Կողմ)։ Այդ մէկը չի մոռանում խորամանկը։



ՇՈՒՇԱՆ.—Ի հարկէ, ես քեզ համար կը պատժեմ ամէն ինչ և ոչ մի բան էլ ծածուկ չեմ պահի։ Միայն թէ դու պէտք է ուտես և խմես ախորժակով։ (Ածեց)։

ՍԱՀԱԿ.—Իմ սիրելի, ո՞ր տղամարդը չի ուտի և խմի քո ձեռքից ախորժակով։ (Խմեց)։

ՇՈՒՇԱՆ.—Ա՜յ, այդ ասածդ ինձ դուր եկաւ։ Հիմա տեսնում եմ, որ դու առաջուայ պէս սկսել ես ինձ սիրել։

ՍԱՀԱԿ.—Օ՜, ես քեզ միշտ սիրել եմ, միշտ։

ՇՈՒՇԱՆ.—Դէ, խմիր մէկ էլ։ (Ածեց)։

ՍԱՀԱԿ.—Սա քո կենացը։

ՇՈՒՇԱՆ.—Ո՜չ, սպասիր, իմ կենացը կը խմես յետոյ, սա դեռ խմիր հէնց այնպէս։

ՍԱՀԱԿ.—Լաւ, թող քո ասածը լինի։ (Խմեց)։

ՇՈՒՇԱՆ.—Դէ հիմա էլ ձուկ անուշ արա. կարծեմ դու ձուկ շատ ես սիրում։

ՍԱՀԱԿ.—Իսկ քեզ ձուկից էլ շատ եմ սիրում։ (Քահ-քահ ծիծաղ)։

ԳԱՆԻԱՆԷ.—(Կողմ)։ Խելքը դեռ գլխին է։

ՇՈՒՇԱՆ.—Օ՜, այդ մէկը ինձ աւելի ես դուր եկաւ։ Տեսնում ե՞ս, մինչև չես խմում, չես զուարթանում։

ՍԱՀԱԿ.—Իսկ դո՞ւ, դու ինչո՞ւ չես խմում։

ՇՈՒՇԱՆ.—Եթէ հրամայես, ինչո՞ւ չէ։

ՍԱՀԱԿ.—Ես հրամայում եմ... խմիր տեսնենք։

ՇՈՒՇԱՆ.—(Փոքրիկ շիշից ածեց)։ Կենացդ, հայրիկ։ (Խմեց)։ Ի՞նչ է, զարմացար։

ՍԱՀԱԿ.—(Ապշած)։ Ի՞նչ, և դու խմեցի՞ր։ Դու հիմա խմե՞ն էլ ես սկսել... դու, աղջիկարմատ, չամաչեցի՞ր։

ԳԱՑԻԱՆԷ.—(Կողմ)։ Խորամանկութեանս նայեցէք... Տէր Աստուած։

ՇՈՒՇԱՆ.—(Քրքջալով)։ Բայց դու մէկ տես, սա ինչ բան է։ (Նոյնից ածեց)։ Ապա մէկ փորձիր, հայրիկ։

ՍԱՀԱԿ.—(Խմեց խզուած ծիծաղով)։ Սա հօ շաքարի ջուր է։ Իմ սիրելի, իմ նազելի, իմ քնքոյշ որդի։ Ես միշտ մտածել եմ, որ մեր թշնամիները կուրացել են և քիչ լաւ չեն ճանաչել և վրադ վատ-վատ լուրեր են տարածել։ Բեր մի համբուրեմ քեզ։ (Ուզում է համբուրել)։ Ոչ, ոչ. չեմ ուզում դիպչել այդ հրաշալի սանրուածքիդ։ Միայն թէ ինձ զարմացնում է այդ բանը, թէ որտեղից է այդ շքեղութիւնը։

ԳԱՑԻԱՆԷ.—Որտեղից պիտի լինի, մեռնի՞ էինք մենք. փառք Աստուծոյ։

ՇՈՒՇԱՆ.—Մենք ապրում ենք մեր աշխատանքով։

ՍԱՀԱԿ.—Դուք ապրում էք ձեր աշխատանքով։

ԳԱՅԻԱՆԷ.—Ապա ինչ է, կեղծ փող էինք կտրում։

ՍԱՀԱԿ.—Այսինքն դուք՝ մայր և աղջիկ ձեռք ձեռքի տուած էք աշխատել։

ՇՈՒՇԱՆ.—Ա՜խ, հայրիկ, ինչու՞ ես զարմացած հարցեր տալիս. սասցի որ վաղը առաւօտ հաշիւ կը տամ. էլ ինչ ես ուզում։

ՍԱՀԱԿ.—Իսկ եթէ սուտ լինի, մի րոպէ չեմ մնայ այստեղ։ (Կնոջը)։ Լսում ե՞ս։

ԳԱՅԻԱՆԷ.—Լսում ենք, լաւ։

ՍԱՀԱԿ.—Եթէ սա չլինէր, ես յաւիտեան ոտ չէի դնի այստեղ։ (Ծածուկ)։ Ճշմարիտ է, Շուշան, որ դու հաշտուել ես Օվանէսի հետ։

ՇՈՒՇԱՆ.—Այո՛, ճշմարիտ է։

ՍԱՀԱԿ.—Եւ նա գալիս է այստեղ։

ՇՈՒՇԱՆ.—(Նոյնպէս, որպէս թէ ծածուկ)։ Մի քանի օր է, երեկոները։

ՍԱՀԱԿ.—Այդ լաւ է. թող ոչ ոք չիմանայ։ Դու սրա խելքով մի լինի, Շուշան. ես քեզ ասում եմ՝ դու նրա հետ բախտաւոր կը լինես։

ՇՈՒՇԱՆ.—Ի հարկէ։

ԳԱՅԻԱՆԷ.—(Ծածուկ)։ Բաւական է, տար հեռացրու այստեղից։

ՇՈՒՇԱՆ.—Դէ՛, գնա քնիր, հայրիկ... Մեր քունն էլ տանում է։

ՍԱՀԱԿ.—Հանգցրէք ճրագը և պառկեցէք քնելու։ Պինդ կողպեցէք դռները, թէ չէ՝ վատ գողեր են յայտնվել։ Տար ինձ իմ սենեակը, պառկեցրու և ծածկիր ինձ։ Իսկ առաւօտեան դուք ինձ հաշիւ պիտի տաք։ (Կնոջը)։ Է՜յ, լսում ե՞ս, դու էլ։

ԳԱՅԻԱՆԷ.—Լաւ, լաւ. գլուխներս մի տանի. լսում ենք։

ՍԱՀԱԿ.—(Շուշանիկի օգնութեամբ գնում է իր սենեակը մրմնջալով)։ Թէ չէ՝ Աստուած գիտէ, թէ գլխովս ինչ մտքեր են անցնում։ (Գնացին)։

(Մտնում է խաղասենեակից Դասպարը երկու բուղը ձեռքին պատռտելով)։



## ՏԵՍԻԼ 3

### Գայիանէ եւ Դասպար

ԴԱՍՊԱՐ.—Թէկուզ գլուխդ պատերին խփիր, թէկուզ տրաքուիր մէջիցդ, չի բերում, չի բերում, չի բերում։ (Ցրելով կտրվածները)։ Գոնէ դու քո արդար ձեռովդ գինի ածէիր մի քաժակ։ (Գայիանէին ածեց)։ Ամենից լաւը քո գործն է։ Ով տանի չտանի, դու հօ միշտ տարած ես։ Հը՛, ինչպէ՞ս է գնում գործերդ։

ԳԱՅԻԱՆԷ.—Խմում ես՝ խմիր, էլ գլուխս մի տանի։

ԴԱՍՊԱՐ.—Էլի՞ խոովեցիր։ Դէ լաւ, արի՛ հաշտուենք։ Ինչու՞ քեզ նման կնոջ մարդը չի եղել իմ հանգուցեալ հայրը։ Աստուած ողորմի կողքի մեռելներին։

ԳԱՅԻԱՆԷ.—Որ գլխս իմանար։

ԴԱՍՊԱՐ.—Ոչ. այլ որ ամեն օր արբած տուն գար և մուշտին գլխիդ մէջտեղին հասցնէր՝ ինչպէս մօրս գլխին։

ԳԱՅԻԱՆԷ.—Այդ ինչի՞ համար։

ԴԱՍՊԱՐ.—Նրա համար, որ խելքդ մի քիչ գլխիդ հաւաքուէր։ Մի խօսքով՝ կենացդ։ (Խմեց)։

ԳԱՅԻԱՆԷ.—Հը՛մ, կոկորդումդ մնայ, խեղդուես ու պրծնես։

ԴԱՍՊԱՐ.—Դէ լաւ, քեզ նման գեղեցիկ մադամին ինչ կը վայելի երիտասարդի յիմարութիւններից նեղանալ։ Ի՞նչ ես կարծում, Գայիանէ։ (Նստում է տախտի վրայ)։ Եթէ ես մեծ ուսում առած լինէի, ինձնից երևելի մարդ չէ՞ր դուրս գայ։

ԳԱՅԻԱՆԷ.—Վերջացրու տեսնենք՝ խօսքդ ինչի մասին է։

ԴԱՍՊԱՐ.—Հաշտութիւն, Գայիանէ, հաշտութիւն։ Հանաք բան չկարծես իմ արածը։ Ո՞վ ունի իմ քաղցը լեզուն. ով կը կարողանար նորից Օվանէսին այստեղ բերել։ Մի կողմից ձեր ականջը լցրի, որ նա ձեր բարին է ցանկանում, միւս կողմից էլ նրան համոզեցի, թէ դուք նրա կարօտից մեռնում էք, և որ անունը տալիս՝ բերանդիդ ջուրն է վազում։ Հիմա ձեր բարեկամութիւնը տեսնելով՝ քիչ է մնում սիրտս տրաքուի։

ԳԱՅԻԱՆԷ.—Էլ սիրտդ ինչու՞ է տրաքվում։

ԴԱՍՊԱՐ.—Ապա ինչ։ Այդքան խոր խելք ունենաս, այդքան ուշք ու միտք, և որտե՞ղ գործադրես. 2 նշանուածներ հաշտեցնելու։ Հը՛մ, ես կարող էի 2 մեծ տէրութիւններ կռուեցնել՝ մէջտեղ մտնել և միլիոններ վաստակել։

ԳԱՅԻԱՆԷ.—Իսկ եթէ միլիոն ունենայիր, ինչ կանէիր։

ԳԱՍՊԱՐ.—Բարի մայր լինելուդ համար՝ գերեզմանիդ վրայ եկեղեցի շինել կը տայի։

ԳԱՅԻԱՆԷ.—Հողեմ լակած գլուխդ։

## ՏԵՍԻԼ 4

**Դայիանէ, Գասպար եւ Շուշան**

ՇՈՒՇԱՆ.—(Մտաւ հօր սենեակից)։ Պառկեցրի վերջապէս։ Ինչո՞ւ էք փախել։

ԳԱՍՊԱՐ.—Անտրակտ եմ անում, գուցէ բախտը շուռ գայ և մեր կողմը, թէ չէ՝ մի գլուխ փողերս գնում է ու գնում։ Իսկ դուք ինչու փախաք։

ՇՈՒՇԱՆ.—Մի ժամանակ այնտեղից ինձ փախցնում էիք, յիշում է՞ք։

ԳԱՍՊԱՐ.—Չէ՞ք իմանում՝ երիտասարդի գլխում օրը քանի տեսակ քամի է փչում։ Շատ տարաք։

ՇՈՒՇԱՆ.—Ինչին բան։

ԳԱՅԻԱՆԷ.—Բաւականն չէ, Շուշան։ Գուցէ տղերքը նեղանում են, որ դու նստում ես նրանց հետ։ Աղջիկարմատին չի պատկանի, սիրելիս, նստել թուղթ խաղալը։

ԳԱՍՊԱՐ.—Ոսկի է բերանդ, և խօսքերդ՝ մարգարիտ։

ԳԱՅԻԱՆԷ.—Քեզ բան հարցնող չկայ։

ԳԱՍՊԱՐ.—Այնու ամենայնիւ աղջիկդ իր բանը քեզնից լաւ է հասկանում։ Եւ ինչու չէ. քանի որ մարդս երիտասարդ է, չպէ՞տք է մտածի իր ապագայի մասին։ Չէ՞ որ սև օրուայ համար մի բան պէտք է յետ գցել։

ՇՈՒՇԱՆ.—Իսկ դուք շատ էք յետ գցել։

ԳԱՍՊԱՐ.—Ո՞ւր է, իմ բախտս բերում է ձերի պէս։

ԳԱՅԻԱՆԷ.—Ի՞նչ ես հաջեցնում նրան. չե՞ս հասկանում՝ ինչ յիմարութիւններ է խօսում։

ԳԱՍՊԱՐ.—Տէ՛ր Աստուած. սուտիցս նեղանում էք, ճըշմարտիցս նեղանում. ինչպէս անենք ուրեմն, որ ձեզ՝ մօր և աղջկայ դուր գանք։

ՇՈՒՇԱՆ.—Աւելի լաւ է՝ լեզուներիդ տէրութիւն անէք, վերջացաւ գնաց։

ԳԱՍՊԱՐ.—Է, ես մեղայ Աստուծոյ։



## ՏԵՍԻԼ 5

**Դայիանէ, Շուշան, Գասպար եւ Օվանէս**

ՕՎԱՆԷՍ.—(Մտաւ դրսից, գդակը դրեց սեղանի վրայ, օձիքը վեր քաշած, զզզուած)։ Բարի երեկոյ ձեզ։ (Ձեռք է տալիս)։

ԳԱՅԻԱՆԷ.—Ինչո՞ւ էք այդպէս ուշացել։

ԳԱՍՊԱՐ.—Լսել է, որ իրան ծանր պահողի պատիւը շատ կը լինի։

ՇՈՒՇԱՆ.—Ինչու էք ծաղրում. երևի մի պատճառ է եղել։

ՕՎԱՆԷՍ.—Ի հարկէ առանց պատճառի չէր։

ԳԱՅԻԱՆԷ.—Գուցէ խաղալու փող չունէք. ես կը տամ։

ՕՎԱՆԷՍ.—Օ՜ ոչ, ինչ էք ասում... ես առանց այն էլ ամաչում եմ...

ՇՈՒՇԱՆ.—Այն ժամանակ ես ձեզ համար կածեմ մի բաժակ գինի, որ ամօթին իսկոյն դուրս կը մղի։

ԳԱՍՊԱՐ.—Ինչպէս լաւ էլ գիտէ միջոցը։

ԳԱՅԻԱՆԷ.—(Բարկացած նրա վրայ)։ Երևի ուզում էր ասել՝ գինին հաւարձակութիւն կը տայ։

ՕՎԱՆԷՍ.—Այդ ճշմարիտ է, խնդրեմ։ (Շուշանիկը լցրեց բաժակը եւ տուեց)։ Շնորհակալ եմ։

ԳԱՍՊԱՐ.—Խմիր հաշտութեան կենացը։ Երևելի բան է հաշտութիւնը։ Երբ մարդ հաշտ է, թէկուզ քարերի վրայ քնի, բայց այնպէս է խոմփացնում, որ կարծես աշխարհի վրայ ոչ հոգս ունի և ոչ էլ անելու մի որևէ բան։

ՕՎԱՆԷՍ.—Ոչ. սա մի այնպիսի բօպէ է, որ պէտք է խօսի լռութիւնը։

ԳԱՍՊԱՐ.—Խօսի լռութիւնը։

ՕՎԱՆԷՍ.—Այո, միմիայն լռութիւնը. և ոչ ունի աւելի սուր լեզու, քան թէ լռութիւնը։ (Շուշանիկն)։ Ձեր կենացը։ (Խմեց)։

ՇՈՒՇԱՆ.—Անոյշ։

ԳԱՅԻԱՆԷ.—Բայց ինչու ես այդպէս գունատ։

ՇՈՒՇԱՆ.—Նա միշտ այդպէս է եղել։

ՕՎԱՆԷՍ.—Տեսնում է՞ք, օրիորդը աւելի լաւ է նկատել։

ԳԱՅԻԱՆԷ.—Իսկ ինչու ես օձիքդ վեր բաշել։

ՕՎԱՆԷՍ.—(Իսկոյն ուղղեց)։ Ա՛խ...

ՇՈՒՇԱՆ.—Դէ ասացէք, ինչու էք այսօր ուշացել։

ՕՎԱՆԷՍ.—Ես զբաղուած էի մեր տան իրերը կապտելով։

ՇՈՒՇԱՆ.—Ի՞նչ է պատահել։

ՕՎԱՆԷՍ.—Այս գիշեր ժամը 3-ին մենք ճանապարհվում ենք։

ՇՈՒՇԱՆ.—Ո՞ւր։

ՕՎԱՆԷՍ.—Անդրկասպեան երկիր։

ՇՈՒՇԱՆ.—Այդպէ՞ս վճռեցիք վերջը։

ՕՎԱՆԷՍ.—Այո, էլ այս քաղաքում անելիք չունենք։

ԳԱՍՊԱՐ.—Ճշմարիտ։

ՕՎԱՆԷՍ.—Այո, բանը այդպէս դառաւ։ Հայրս ստիպուած եղաւ փակել արհեստանոցը, այսինքն աւելի շուտ՝ նրան ստիպեցին իր բանուորները։ Անվերջ գործադուլներ, անվերջ պահանջներ. իսկ նա հին մարդ է, չկարողացաւ։

ՇՈՒՇԱՆ.—Ապա ինչ պիտի անի այնտեղ խեղճը։

ՕՎԱՆԷՍ.—Այնտեղ ապրում է մօրս եղբայրը. նա վաղուց է մեզ հրաւիրում։

ՇՈՒՇԱՆ.—Ուրեմն դուք եկել էք մնաս բարի՞ ասելու։

ՕՎԱՆԷՍ.—Այո։

ԳԱՅԻԱՆԷ.—Չէ, Օվանէս, մենք քեզ այդպէս հեշտ չենք թողնի. դու մի երկու ժամ դեռ մեզ մօտ կը մնաս, և մենք քեզ փլաւ կը հիւրասիրենք։

ՕՎԱՆԷՍ.—Եթէ միայն ձեզ չեմ ձանձրացնի։

ՇՈՒՇԱՆ.—Ի՞նչ էք ասում. դուք մի լաւ կը զուարճանաք այստեղ։

ՕՎԱՆԷՍ.—Շնորհակալ եմ։

ԳԱՍՊԱՐ.—Բայց մինչ մնաս բարև ասելդ՝ չի՞ կարելի պատմես, թէ ինչ եղաւ այն գործի դատաստանը։

ՇՈՒՇԱՆ.—Դատաստանը՞. ի՞նչ գործի։

ԳԱՍՊԱՐ.—Չեմ իմանում... Յանցաւորը մի կին է շատ գեղեցիկ. նա փորձել է վիրաւորել իր մարդուն, բայց անզգուշութիւնով, թէ անփորձութիւնով, թէ հէնց իմանալով՝ խփել է ուղիղ սրտի մէջտեղին։

ՇՈՒՇԱՆ.—Ապա էլ ինչո՞ւ են ուշացնում վճիռը։

ԳԱՍՊԱՐ.—Դատաւորը անփորձ երիտասարդ է, ձգձգում է բանը և խելքին զոր է անում։

ՕՎԱՆԷՍ.—Ինչո՞ւ ես մեղադրում դատաւորին։

ԳԱՅԻԱՆԷ.—Ի հարկէ, մի՞թէ կարելի է աչքերը կապած վճիռ հանել։

ԳԱՍՊԱՐ.—Ձեզ ո՞վ ասաց, որ աչքերը կապի. ընդհակառակը, եթէ նա լաւ դատաւոր է, թող աչքերը լաւ բացի։

ԳԱՅԻԱՆԷ.—Երևի ուրեմն բռնելու տեղ չկայ։



ԳԱՍՊԱՐ.—Ոչ։ (Ծաղրական եղանակով)։ Բռնելու տեղ կայ, միայն թէ տեսնողները նկատել են, որ ամեն անգամ դատաւորը այդ կնոջ հետ խօսելիս՝ քիչ է մնում նրա առաջ շաքարի նման հալուի։

ՇՈՒՇԱՆ.—Իսկ վկաներ կա՞ն։

ԳԱՍՊԱՐ.—Կայ միայն մի վկայ, բայց այդ շան որդու ոչխին էլ նայող չկայ։ Եւ տեղն է. ի՞նչ է գլուխը քարին տալիս։ Ես լինէի նրա տեղը՝ լեզուս տակից կը կտրէի և կը պատանձուէի... Շատ հարկաւոր է։

ՇՈՒՇԱՆ.—Ինչո՞ւ համար։

ԳԱՍՊԱՐ.—Նրա համար, որ դատաւորը կապում է նրա բերանը։

ՇՈՒՇԱՆ.—Ա՛յ քեզ պատմութիւն։

ՕՎԱՆԷՍ.—(Բռնելով գլուխը)։ Այո, իսկ որ պատմութիւն։ (Թուլանում է)։

ՇՈՒՇԱՆ.—Ի՞նչ պատահեց սրան։

ԳԱՍՊԱՐ.—(Իսկոյն նայելով շիշին)։ Երևի գինին գլխին ընկաւ։

ՕՎԱՆԷՍ.—Ոչինչ... Իսկ որ գինին գլխիս ընկաւ։

ՇՈՒՇԱՆ.—Դատարկ բան է. համեցէք, տղերանց հետ մի քիչ նստէք, խմոյն կանցնի։

ՕՎԱՆԷՍ.—Եթէ գործ ունէք, դուք համեցէք... ես յետոյ։

ՇՈՒՇԱՆ.—Շատ լաւ. ցանկամ այս գիշեր մի լաւ տանէք։ Ես ձեզ կը սպասեմ։ Մայրիկ, մի լաւ ընթրիք պատրաստիր։ (Գնաց խաղասենեակ)։

ԳԱՅԻԱՆԷ.—Զգուշացիս, Օվանէս, թէ չէ՝ շատ կը նեղանամ, Աստուած վկայ։ (Գնաց խոհանոց)։

## ՏԵՍԻԼ Գ

### Գասպար եւ Օվանէս

ՕՎԱՆԷՍ.—(Շուշանի ետեւից)։ Շան ծնունդ, ինչ զօրութիւն կայ քո մէջ։

ԳԱՍՊԱՐ.—Մի զօրութիւն, որի առաջ տղամարդը կատու է դառնում։

ՕՎԱՆԷՍ.—Ի՞նչ ես ուզում ինձնից, մի՞թէ քո սրտում խիղճ չկայ։

ԳԱՍՊԱՐ.—Կար մի կտոր, այն էլ կօշկիս կարկատան դցել տուի։ (Գրպանից հանում է ատրճանակ)։ Զի՞ս կարող ասել ինձ, թէ ի՞նչ է ասում սա իր բացած այս կլորիկ բերանով։

ՕՎԱՆԷՍ.—Ոչ։

ԳԱՍՊԱՐ.—Նա ասում է՝ «ես պահանջում եմ պատիւ, իսկ եթէ նրան բաւարարութիւն չեն տալիս՝ թրախկ». ահա ինչ է ասում նա։ Ձեռ կամենում։

ՕՎԱՆԷՍ.—Հեռացրու ինձանից, փորձանքի մէջ մի գցի ինձ։ (Ուզում է խմել)։

ԳԱՍՊԱՐ.—Ինչպէս մի թոյլ կին արտասուքով, դու էլ խմելով ես ուզում հանգցնել կրակը։

ՕՎԱՆԷՍ.—Եթէ ես այս ճոխութիւնը չէի կարողանալու տալ նրան, ապա ինչ իրաւունք ունեմ պատիւ պահանջելու։

ԳԱՍՊԱՐ.—Տեսնում եմ, եղբայր, Արամի փչած քամիները խոր են ազդել քո վրայ։ Էհ Օնիկ... աւելորդ է իմ խօսելը։ Գնա։ Այդպիսի մի գործ կատարում են առանց երկար ու բարակ տատանումների, կատարում են յանկարծ, բռնէբարբ, իսկ ով այսօր-էգուցի դցեց, պրծաւ։ Գնա, եղբայր, Աստուած բարի ճանապարհ տայ քեզ։ Ինչ ինձ է վերաբերում, ես բանը էլ չեմ երկարացնի, գնաս բարով։ (Գնաց խաղասենեակ)։

## ՏԵՍԻԼ 7

### Օվանէս (մենակ)

ՕՎԱՆԷՍ.—Բայց ես կը տայի քեզ իմ սիրտը, իմ սէրը, իմ երիտասարդութիւնը։ Յիմար, մթթէ դատարկ սէրը ոսկի է, ճոխութիւն, զարդարանք։ Մթթէ իմ ողորմելի սէրը կարող էր ձմեռուայ ցրտին տաքացնել նրան, կամ յագեցնել նրան՝ երբ նա քաղցած կը լինէր։ Ես առաջարկեցի նրան մի անհիւթ, աներևոյթ բան, իսկ նա ուզում է ահա թէ ինչ։ (Ցոյց է տալիս սենեակի շքեղութիւնը, խփելով սեղանին)։ Կործանել, քար քարի վրայ չթողնել, այրել ամեն ինչ, այո, բոլորը, բոլորը, և իրան էլ հետը։ (Խմում է մի քիչ, փորձում է նորից)։ Ոչ։ (Ցետ դնելով բաժակը)։ Հեռու ինձանից թուլութիւնը։ Էլ չեմ կամենում խմել։ (Բացում է ննջարանի դուռը)։ Ահա, եթէ ես կարողանայի այստեղ, հէնց այստեղ, նրա այս փափուկ անկողնի վրայ։ Եւ եթէ կարելի լինէր առաջ ինձ, յետոյ իրան... Բայց ոչ. առաջ իրան և միմիայն իրան։ Այդպէս է օրէնքը։ Տանջուիր՝ ինչպէս կուզես, բայց նախ աչքովդ տես, թէ ինչպէս կը թափուի նրա տաք-տաք կարմիր արիւնը, ինչպէս սարսափած նա կը դցի քո վրայ իր վերջին հայեացքը, ինչպէս կը փչի նա իր վերջին շունչը։ Ա՜խ, անգութ գեղեցկուհի, ինչու բանը այստեղը հասցրիր։ Ցետոյ կը բերեն ինձ մօտ իմ ծնողներին. կը դան



կը կանգնեն նրանք իմ առաջ և կը սկսեն նայել ինձ իրանց սպանիչ և յուսահատ հայեացքով։ Ցետոյ ես կը շարժեմ ոտքերիս շղթաները և ձայն կը տամ. «Ինչու էք եկել։ Ձէ՞ որ ձեր օրհասը մօտ է. մթթէ ձեզ համար միևնոյնը չէ, թէ ով կածի ձեր ցամաքած դիակների վրայ վերջին 3 բուռ հողը. ինչու էք եկել»։ Իսկ նրանք անխօս, քաղցած, ծարաւ, գլուխները ծռած լաց կը լինեն, լաց կը լինեն...։ Ա՜հ, լացէք թէկուզ այնքան, որ արտասուքի տեղ արիւն հոսի ձեր աչքերից... Բայց ես պէտք է անեմ, պէտք է անեմ...

## ՏԵՍԻԼ 8

### Օվանէս եւ Գրիգոր

ԳՐԻԳՈՐ.—Երիտասարդ, չէ՞ք կամենում ինձ հետ մի բաժակ գինի խմել։

ՕՎԱՆԷՍ.—Ոչ... ես նոր խմեցի։

ԳՐԻԳՈՐ.—Խմենք մէկն էլ։

ՕՎԱՆԷՍ.—Ձեմ կամենում։

ԳՐԻԳՈՐ.—Իսկ եթէ ես առաջարկեմ մի լաւ կենաց։

ՕՎԱՆԷՍ.—Ինձ ոչ մի կենաց չի հետաքրքրում։

ԳՐԻԳՈՐ.—Նոյնիսկ գեղեցիկ աղջիկների՞։

ՕՎԱՆԷՍ.—Արժանի են ամենքը՞։

ԳՐԻԳՈՐ.—Այն ժամանակ՝ ով որին սիրում է։

ՕՎԱՆԷՍ.—Ես այդպիսին չունեմ։

ԳՐԻԳՈՐ.—Դուք ձեզ վատ էք զգում։

ՕՎԱՆԷՍ.—Սաստիկ ցաւում է գլուխս։ (Գրիգորը խմեց)։ Կռիւ պատահեց։

ԳՐԻԳՈՐ.—Այո... մի քիչ համբերութիւնից հանեցին ինձ։

ՕՎԱՆԷՍ.—Ի՞նչ քաջն էք եղել։

ԳՐԻԳՈՐ.—Ով գիտէ կեանքի արժէքը, նա իմ աչքում աւելի բարձր է, քան քաջը։

ՕՎԱՆԷՍ.—Հըմ... դուք խելօք էլ էք եղել... ես այդ չը գիտէի։

ԳՐԻԳՈՐ.—Այո, շրջելով Ռուսաստանի ոստանները և ամեն տեղ թուղթ խաղալով՝ ես ձեռք եմ բերել մեծ փորձառութիւն։

ՕՎԱՆԷՍ.—Եւ ուրեմն գիտէք, որ խելքը առանց պատուասիրութեան վախկոտութիւն է։

ԳՐԻԳՈՐ.—Լաւ է լինել խելօք և վախկոտ, քան յիմար և պատուասէր։

ՕՎԱՆԷՍ.—Ահա թէ ինչ քնքշութիւններով էք դուք գալիս դուք կանանց։

**ՏԵՍԻԼ 9**

**Օվանէս, Շուշան եւ վերջում Գասպար**

ՇՈՒՇԱՆ.--(Մտաւ խաղասենեակից)։ Կարող են նկատել, որ տանելը և փախչելը ան... անյարմար բան է։

ԳՐԻԳՈՐ.—Ասա՝ ուղղակի անազնուութիւն է, և ես քեզ կասեմ, որ ես փախչողը չեմ։ Կենացդ։ (Խմեց եւ գնաց խաղասենեակ)։

ՕՎԱՆԷՍ.—Վերջապէս մենք մենակ ենք։

ՇՈՒՇԱՆ.—Դուք այդ շատ էիք ուզում։

ՕՎԱՆԷՍ.—Է՛հ, չէ՞ որ վերջին երեկոն է, որ ձեզ տեսնում եմ։

ՇՈՒՇԱՆ.—Խմենք մէկ մէկ։

ՕՎԱՆԷՍ.—Ձեզ հետ թէկուզ մեռնել։

ՇՈՒՇԱՆ.—Ինչու՞ մեռնել... մեր կեանքի գարունը նոր է սկսուել, մենք դեռ երիտասարդ ենք։ (Ածեց)։

ՕՎԱՆԷՍ.—Ոչ, ես այլևս երիտասարդ չեմ... Երգուեց իմ երգը։ Ա՜յ, դուք՝ այդ ուրիշ բան է. դուք օր-աւուր բացվում էք ինչպէս մի վարդ։

ՇՈՒՇԱՆ.—Ա՜խ մի վարդ, որը պէտք է յետոյ թառամի։ Է՛հ, խմենք։

ՕՎԱՆԷՍ.—Խմենք։

ՇՈՒՇԱՆ.—Դուք գնո՞ւմ էք։

ՕՎԱՆԷՍ.—Այո՛, գնում եմ։

ՇՈՒՇԱՆ.—Ուրեմն գնա՛ք բարև... բարի ճանապարհ... (զարկեցին ... խմեցին ծիծաղելով)։

ՕՎԱՆԷՍ.—Եթէ կարելի լինէր, ես կապտակէի նրան, ով տուել է ձեզ այդ գեղեցկութիւնը։

ՇՈՒՇԱՆ.—Մի՞թէ կուզէիք, որ ես տգեղ լինէի։

ՕՎԱՆԷՍ.—Գոնէ այն ժամանակ ես ձեզ այդպէս չէի սիրի։

ՇՈՒՇԱՆ.—Իսկ դուք դեռ ինձ սիրում էք։

ՕՎԱՆԷՍ.—Դեռ դուք հարցնում էլ էք։

ՇՈՒՇԱՆ.—Ուրեմն եթէ սիրում էք, խմենք մէկն էլ։

ՕՎԱՆԷՍ.—Ա՜հ, թէկուզ տասն-մէկը, միայն թէ այրուած սիրտս կարողանար մի փոքր զովութիւն զգալ։



ՇՈՒՇԱՆ.—Ա՜։ Մի նայէք ինձ այդպէս. դա սիրողի աչքեր չեն։

ՕՎԱՆԷՍ.—Աչքերս էլ են վատացել աչքերիդ։ Մի ժամանակ այդպէս չէիք ասում։

ՇՈՒՇԱՆ.—Իսկ դուք մի ժամանակ ինձ այդպէս չէիք նայում։ Բացի այդ, չէ՞ որ ես մի անփորձ խենթուլիկ էի։

ՕՎԱՆԷՍ.—Ոչ, դուք խենթուլիկ չէիք, այլ ինձ էիք խենթացրել։

ՇՈՒՇԱՆ.—Ոչ, ոչ, ոչ. ես հէնց հիմա էլ խենթուլիկ եմ... այնպէս չէ՞. այ տեսէք։ (Ցանկարծ ճամբուրում է նրան)։ Ա...

ՕՎԱՆԷՍ.—Ի՞նչ էք անում...

ՇՈՒՇԱՆ.—Այ, հիմա ինձ դուք եկան ձեր աչքերը. այդ ի՞նչ է, արտասո՞ւք։ Մի՞թէ դուք կամենում էք լաց լինել։

ՕՎԱՆԷՍ.—Ա՜հ... աւելին, աւելին։

ՇՈՒՇԱՆ.—Ի՞նչ է պատճառը։

ՕՎԱՆԷՍ.--Դուք։

ՇՈՒՇԱՆ.—Ե՞ս։

ՕՎԱՆԷՍ.—Այո՛, դուք։ Ինչու՞ համար ստիպեցիք ինձ բացել ձեր առաջ իմ սիրտը։ Ինչու՞ ինձ գաղտնի համբոյրներ տուիք և յետոյ փշրեցիք իմ յոյսերը... իմ ապագայ ողջ կեանքը։ Ինչու՞ ցեխի մէջ շպրտեցիք, ինչու՞ ոտքներիդ տակ տրորեցիք իմ սիրտը։

ՇՈՒՇԱՆ.—Ես կարծեցի, թէ դուք շնորհակալ կը լինէք... որ ես համբուրեցի ձեզ... որ թոյլ տուի ձեզ ինձ սիրել, գաղտնի համբոյրներով ծածկել թշերս... այն ժամանակ ես ձեզ ոչինչ չասացի...

ՕՎԱՆԷՍ.—Կեղտի մէջ էլ լինես ընկած, բայց դու դեռ մի անմեղ վարդ ես...։ Ի հարկէ շնորհակալ եմ, դուք իրաւունք ունէք. չէ՞ որ այն ժամանակ մեր մի քանի ժամերն էլ մի ամբողջ դրախտ, մի եդեմական երջանկութիւն էին ինձ համար։

ՇՈՒՇԱՆ.—Տեսնում է՞ք. իսկ դուք այսօր կշտամբում էք ինձ։

ՕՎԱՆԷՍ.—Իսկ յետո՞յ... Ինչի՞ ամեն բան փոխուեց յետոյ։

ՇՈՒՇԱՆ.—Մի՞թէ ես իմանում եմ, թէ ինչու՞ փոխուեց... Գուցէ դեռ էլի՞ շատ բան է փոխուելու։ Ես անմեղ եմ, Օվանէս։

ՕՎԱՆԷՍ.—Զգիտեմ իրո՞ք անմեղ ես թէ՞ միայն ձևանում ես անմեղ։

ՇՈՒՇԱՆ.—Ա՜խ, Աստուած վկայ՝ անմեղ եմ... անփորձ։ Մի բարկանայ ինձ վրայ... Բաժանվում ենք միմեանցից, և ես չեմ ուզում, որ դուք ինձնից խռով հեռանաք։ Ուրեմն խմենք

մէկ մէկ էլ։ (Ածեց)։ Սա ձեր կենացը։

ՕՎԱՆԷՍ.—Ի հարկէ ես գիտեմ, թէ ինչ սրտով կը խմէք դուք իմ կենացը։

ՇՈՒՇԱՆ.—Զէ՞ որ ես խմում եմ անկեղծ սրտով, խմում եմ՝ ինչպէս բարեկամ. մի՞թէ ես մարդ չեմ, մի՞թէ ես սիրտ չունեմ... Ներեցէք ինձ, Օվանէս, նայեցէք ինձ մի եղբօր աչքով. հաշուեցէք, որ ես մի երեխայ եմ... որ չգիտէ իր արածը։ Ինչո՞վ է մեղաւոր մի անզօր, ջրի վրայ ընկած ծաղիկ, որին քամին տանում է այնտեղ, ուր որ ինքն է գնում... Մի՞թէ չէք հաւատում, որ իմ խօսքերը անկեղծ են։

ՕՎԱՆԷՍ.—Օ՜, ինչպէս չէ... Մի ժամանակ, երբ ես կատակով ասում էի, որ չեմ հաւատում ձեր սիրոյն, դուք փաթաթվում էիք պարանոցիս և անթիւ համբոյրներով էիք հաւատացնում։

ՇՈՒՇԱՆ.—Ես այժմ այդ չեմ կարող... Իսկ եթէ դուք կամենաք, ես ընդդէմ ոչինչ չունեմ։

ՕՎԱՆԷՍ.—(Փորձեց)։ Ոչ, ոչ, ոչ։ Ես իրաւունք չունեմ կպչելու ուրիշի սեփականութեան։ Այն ժամանակ դուք իմն էիք։

ՇՈՒՇԱՆ.—Սեփականութի՞ւն... չեմ կամենում լսել այդ խօսքը։ Ես կամենում եմ ազատ լինել, ինչպէս ազատ է իմ հոգին, որ ոչ ոքի չի պատկանում։ Ես կամենում եմ միշտ լինել ինչպէս մի թռչուն... մի թիթեռնիկ...

ԳԱՍՊԱՐ.—(Գլուխը ճանուում է խաղասենեակի դռների միջից եւ նայում)։

ՕՎԱՆԷՍ.—Ո՞վ կարող է հասկանալ և իմանալ ձեր գինը այնպէս, ինչպէս կարող էի իմանալ ես։ Առէք դանակը և խփեցէք սրտիս մէջտեղին, և ես ժպիտը դէմքիս կը գլորուեմ ձեր ոտքերի տակ։

ՇՈՒՇԱՆ.—Օ՜, ոչ, ոչ։ Ես այդպէս անգութ չեմ կամենում լինել։ Ապրենք ամեն մէկս մեզ համար։ Հաւատացէք, Օվանէս։ Ես խղճում եմ ձեզ, բայց ի՞նչ անեմ, երբ անզօր եմ մի բան անելու։ Կը գաք մի բանի տարուց յետոյ և կը տեսնէք ձեր գեղեցիկ հարսնացուին թառամած, թոշնած և ինքներդ էլ կը զարմանաք, որ ինձ մի ժամանակ սիրելիս էք եղել։ Էն ժամանակ էլ չէք յանդիմանի ինձ... այլ ով գիտէ... գուցէ բոլորովին երես կը դարձնէք։ Բայց եթէ կարծում էք, որ ես անտէրանտիրական, ամենքից մոռացուած, քաղաքի ծայրերում կորածների շարքը կը լինեմ ընկած, կամ թէ պառաւութեանս խորշոմները ծածկելու համար երեսս շպարած, լիրբ անամօթ ժպիտը դէմքիս, որ ինձ տեսնողը երեսը շրջի մի կողմ, զզուանքով



թքի և հեռանայ. երբէ՞ք, երբէ՞ք։ Ես յաւիտեան պէտք է գեղեցիկ մնամ, որի տեսքից բոլոր երիտասարդները գժուեն, կամ թոյն կընդունեմ և այնպէս կը մեռնեմ... Խմենք... արբենք, Օվանէս։

ՕՎԱՆԷՍ.—Ի՞նչ պատահեց ձեզ... ուշքի եկէք...

ՇՈՒՇԱՆ.—Ոչ ձիւն է եկել, ոչ անձրև, իսկ ես թրջուած եմ, նշանած... (Ծիծաղելով)։ Օվանէս, թոցրու ինձ... ես արբած եմ... տար ինձ. ես քոնն եմ։

ՕՎԱՆԷՍ.—Այնտեղ ձեզ կը լսեն...

ՇՈՒՇԱՆ.—Տար ինձ իմ ննջարան և տես թէ ականջիդ ինչէ՞ր կասեմ... (Ծիծաղ)։

ՕՎԱՆԷՍ.—Այո, այո, գնացէք, պառկեցէք...դուք իսկ որ արբած էք։

ՇՈՒՇԱՆ.—(Երգելու պէս)։ Ա՛ռ ինձ... տար ինձ...

ՕՎԱՆԷՍ.—Գնանք... ես տանեմ ձեզ...

ՇՈՒՇԱՆ.—(Նոյն)։ Բարի ճանապարհ...

ԳԱՍՊԱՐ.—(Ծածուկ)։ Տղամարդ չի, այլ որդն, որ միայն սողալ գիտէ, գալարուել...

ՕՎԱՆԷՍ.—(Տանում է Շուշանին ննջարան, ճանապարհին ետեւից հանելով դանակը. եւ երբ նրան գցում է մահճակալի վրայ, իսկոյն հասցնում է մի քանի վերքեր)։ Ահա քեզ բարի ճանապարհ։

ՇՈՒՇԱՆ.—(Արձակում է մի ճիչ եւ մարում)։

ՍԱՀԱԿ.—(Այդ ճչի վրայ բեմի ետեւից ձայն է տալիս)։ Է՜յ։

ՕՎԱՆԷՍ.—Ամեն ինչ վերջացաւ։ Գեղեցիկ էր և գեղեցիկ էլ մեռաւ։ (Ցանկարծ բռնում է գլուխը եւ գալիս է բեմ)։ Սարսափելի է... ինչ արի ես .. նրա արիւնը... ահ։ (Սրբում է ձեռքերը, որի ժամանակ ձեռքից ընկնում է արիւնոտ դանակը յատակի վրայ)։ Պէտք է փախչել... բայց ո՞ւր կը փախչես նրանից...։ (Վերցնում է զտակը եւ դնում գլխին։ Լսվում է շոգենաւի սուլոց)։ Դէպի շոգենաւ, փախչեմ շոգենաւ...։ (Գնում է աջ դռնով)։

## ՏԵՍԻԼ 10

**Գասպար, Սահակ, Դայիանի, Մարգար, Գրիգոր եւ այլք**

ՍԱՀԱԿ.—(Նոյն րոպէին, երբ Գասպարը վերցնում է դանակը եւ մտնում ննջարան ու դռները պինդ ծածկում, Սահակը հագած ամարային վերարկու, վրայից շորի գոտի կապած, գլխին պիտակ շոր, կուրծքը բաց, ձեռքին ճրագ, սպիտակ վարտիկով

եւ ոտաթաթերով մտնում է եւ այդ տեսնելով վազում դեպի նեղջարանի դուռը)։ *Բաց արա դուռը, էյ...*

ԳԱՍՊԱՐ.—(Չի թողնում, որ դուռը բացուի)։

ՍԱՀԱԿ.—*Բաց արա դուռը ասում եմ։ Է՜յ, ո՞վ կայ այնտեղ։ Շուշանիկ։ Զայն չկայ։ Էյ, օգնեցէք, գողեր, գողեր։*

ԳԱՅԻԱՆԷ.—(Մտնում է խոհանոցից, միւսները խաղասենեակից)։ *Ի՞նչ է պատահել...։*

ՍԱՀԱԿ.—*Գող, գող, գող. ես իմ աչքով տեսայ, թէ ինչպէս մէկը մտաւ այստեղ։*

ԳԱՅԻԱՆԷ.—*Ա՜... դուռն վրայ արիւն...*

ՍԱՀԱԿ.—*Սպանել են երեխայիս... օգնեցէք...*

ԳՐԻԳՈՐ.—*Էյ, ո՞վ կայ այնտեղ։*

ԳԱՍՊԱՐ.—(Ներսից)։ *Այստեղ ես եմ...*

ԱՄԵՆՔԸ.—*Գասպարն է... Գասպարը։*

ԳՐԻԳՈՐ.—*Բացէք, թէ չէ՝ ես կը կոտրեմ դուռը։*

ԳԱՍՊԱՐ.—(Ցանկարծ բացում է դռները)։ *Ճանապարհ։ Հեռու ամենքդ։* (Ամենքը քաշվում են այս ու այն կողմ)։

ԳԱՅԻԱՆԷ.—(Վազում է ներս նեղջարան եւ ճչալով ընկնում աղջկայ դիակի վրայ)։

ԳԱՍՊԱՐ.—Արիւնոտ դանակը վեր բարձրացնելով)։ *Ցայտնեցէք պոլիցիային, որ ես սպանեցի նրան։*

ԳՐԻԳՈՐ.—(Ուզում է յարձակուել, բայց հանդիպելով Գասպարի հայեացքին՝ կանգ է առնում)։ *Ինչու համար, անմիտ ելբիտասարդ։*

ԳԱՍՊԱՐ.—*Որովհետեւ ես սիրում էի նրան։*

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникова
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԳԱՐԱԳՈՑԸ

ԱԼ. ԱԲԷԼԵԱՆ

ՎԵՐՋ

---

# ՎՐԻՊԱԿ

| Երես | գիծ | տպուած է | պիտի լինի |
|---|---|---|---|
| 4 | 27 | կապոց | կապայ |
| 4 | 29 | ֆն | ես |
| 5 | 8, 9 և 29 | հը՞մ | հը՛մ |
| 7 | 27 | անասուն | անասուն |
| 8 | 1 | ճաքուել | ճաքել |
| 8 | 11 | տայ | տալ |
| 9 | 18 | աշխատի | աշխատիլ |
| 22 | 36 | վակլաս է | վայ |
| 41 | 28 | խորամանկութեանս | խորամանկութեանը |
| 44 | 31 | աղջկայ | աղջկադ |
| 46 | 20 | վլաւ | մի լաւ |
| 53 | 38 | պիտակ | սպիտակ |
| 53 | 38 | վարտիկով | վարտիկով |

եւ ճողարափերով մտնում է եւ այդ տեսնելով վազում դեպի ննջարանի դուռը)։ *Բաց արա դուռը, էյ...*

ԳԱՍՊԱՐ.—(Չի թողնում, որ դուռը բացուի)։

*ՍԱՀԱԿ.—Բաց արա դուռը ասում եմ։ Է՛յ, ո՞վ կայ այնտեղ։ Շուշանիկ։ Զայն չկայ։ Էյ, օգնեցէք, գողեր, գողեր։*

ԳԱՅԻԱՆԷ.—(Մտնում է խոհանոցից, միւսները խաղասե-

ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱ

ՀՀ Ազգային գրադարան
NL0322454